

ԱՆԱՀԻՏ ԱՐՆԱՈՒԴՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ԲԵԴԻՐՅԱՆ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ



2



II
ՄԱՍ



Անահիտ Արնաուդյան

Գայանե Բեդիրյան

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

2

II ՄԱՍ



ՀՏԴ 373:51(075.3)
ԳՄԴ 22.1գ72
Ա 919

Արնատույան Անահիտ, Բեդիրյան Գայանե

Ա 919 Մաթեմատիկա 2: Դասագիրք 2-րդ դասարանի համար /
Ա. Արնատույան Գ. Բեդիրյան.– Եր.: Էդիթ Պրինտ, 2023.
Մաս 2.– 96 էջ:

ՀՏԴ 373:51(075.3)
ԳՄԴ 22.1գ72

ISBN 978-9939-75-972-2

© Անահիտ Արնատույան, Գայանե Բեդիրյան, 2023

© Էդիթ Պրինտ, 2023

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Կարդում եմ, ուսումնասիրում եմ, դիտարկում եմ, հասկանում եմ, վերլուծում եմ, մտքում հաշվում եմ, առաջարկում եմ, ներկայացնում եմ, եզրակացություններ եմ անում, լսում եմ, հիմնավորում եմ, ինձ ստուգում և գնահատում եմ...



Գրում, պատկերում, գծում, նկարում եմ, տվյալներ եմ հավաքում, գրանցումներ եմ անում, հասկանում եմ, վերլուծում եմ, չափում եմ, հաշվում եմ, խնդիր-առաջադրանքներ եմ կազմում, մտքերս եմ գրանցում, եզրակացություններ եմ անում և գրանցում, ինձ ստուգում եմ և գնահատում...




Կարդում եմք, իրար լսում եմք, ուսումնասիրում եմք, դիտարկում եմք, հասկանում եմք, վերլուծում եմք, քննարկում եմք, համեմատում եմք, մտքեր, գաղափարներ, կարծիքներ եմք կիսում, բարձրաձայնում եմք, հիմնավորումներ, փաստարկներ եմք բերում, իրար ստուգում եմք, գնահատում եմք, ներկայացնում եմք...



Գրում եմք, պատկերում, գծում, նկարում եմք, դիտարկումներ անում, վերլուծում եմք, չափում, հաշվում և արդյունքները գրանցում եմք, խնդիր-առաջադրանքներ եմք կազմում, լուծումներ փնտրում, տվյալներ եմք հավաքում ու վերլուծում, եզրակացություններ եմք անում և գրանցում, իրար ստուգում և գնահատում եմք, ներկայացնում եմք...



Փոքր (3-4) կամ մեծ խմբով (ամբողջ դասարանով) աշխատում եմք դասասենյակում կամ դասասենյակից դուրս՝ համագործակցում եմք, կարդում եմք, գրում եմք, պատկերում, գծում, նկարում եմք, դիտարկումներ և գրանցումներ եմք անում, ուսումնասիրում եմք, հասկանում եմք, վերլուծում եմք, չափում եմք, հաշվում եմք, խնդիր-առաջադրանքներ եմք կազմում, տվյալներ եմք հավաքում ու վերլուծում, եզրակացություններ եմք անում և գրանցում, իրար ստուգում և գնահատում եմք, ներկայացնում եմք...



ԲԱԺԱՆՈՒՄ




1. Քեզ արդեն ծանոթ բազմապատկումը և դրա հակառակ գործողությունը եկ քննարկենք:

Խմբերով դրված առարկաների հաշվում

(բազմապատկում)


- ա) Տանձերը քանիսն են:



$$4 \times 3 = 12$$

Հարցին պատասխանեցինք:

- բ) Տանձերը քանիսն են:




$$4 \times 3 = 12$$

Հարցին պատասխանեցինք:


Առարկաները խմբերի բաժանում

- ա) Նման ձևով խմբավորեք:



«Ամբողջի մեջ ամենաշատը քանի՞ եռյակ կա» հարցին պատասխանեցինք՝ 4:

- բ) Երեք ամանի մեջ հավասար բաժանեք:




«Ամբողջը 3 հավասար մասի բաժանելուց ինչ կստացվի» հարցին պատասխանեցինք՝ 4:



2. Քանի ափսե հարկավոր կլինի, եթե այս ամբողջ միրգը դրանց մեջ դնենք՝

ա) 1 - ական,


բ) 3 - ական:




3. Քանի ափսե հարկավոր կլինի, եթե այս ամբողջ միրգը դրանց մեջ դնենք՝

ա) 2 - ական,


բ) 4 - ական:



4. Բերքը տեղավորելու համար քանի այսպիսի արկղ է անհրաժեշտ: Ինչո՞ւ:



Հաշվենք, թե քանի ծաղիկ և ծաղիկների քանի վեցյակ կա: Խմբավորելով ստանում ենք, որ ծաղիկները $5 \times 6 = 30$ -ն են: Ամենաշատը 5 խումբ ստացվեց:




Սա կարելի է այսպես գրել՝ $30 : 6 = 5$: Կարդացվում է՝ **30-ը բաժանած 6-ի հավասար է 5-ի:**

Ինչպես վերևում տեսանք, **$30 : 6$** -ը երկու իմաստ ունի:

1) 30-ի մեջ ամենաշատը քանի 6 կա:

2) 30-ը 6 հավասար մասերի բաժանելուց ինչ է ստացվում:

Հաշվեք՝ քանի գնդակ և գնդակների քանի յոթնյակ կա:



Գնդակները հաշվեցինք: **42** - ն են:

Յոթնյակները ստացվում են 6-ը: Ուրեմն, **42-ի մեջ 6 հատ 7 կա**, այսինքն՝ **$42 : 7 = 6$** :

Առանց նկարի էլ կարող էինք այս բաժանումը անել, քանի որ **$6 \times 7 = 7 \times 6 = 42$** :

Այստեղից հետևում է նաև, որ՝ **$42 : 7 = 6$** և **$42 : 6 = 7$** :




5. Քանի տիկնիկագործ է աշխատել, եթե յուրաքանչյուրը 4 արջուկ է պատրաստել:

$$4 + 4 =$$

$$4 \times ? =$$

$$? : 4 =$$







6. Այս նկարներից յուրաքանչյուրի միրգը պիտի 4 ավստի մեջ հավասար բաժանես: Ամեն ավստում քանի պտուղ կստացվի:



ա)




բ)




գ)




7. Յուրաքանչյուր դեպքում պտուղները 2 ընկերներին հավասար բաժանիր: Ամեն մեկը քանի պտուղ կստանա:



ա) 8 : 2




բ) 4 : 2



գ) 6 : 2



8. Ուլունքները երեք հավասար մասերի բաժանիր: Գործողությունը գրիր:






9. Արտահայտությունների արժեքները հաշվիր:
Օրինակը կօգնի

$$58 - 32 = 58 - 30 - 2 = 28 - 2 = 26:$$


- ա) $49 - 23$, գ) $88 - 65$, ե) $68 - 57$, լ) $52 - 37$,
բ) $66 - 42$, դ) $56 - 35$, զ) $75 - 48$, ռ) $93 - 18$:



10. Պատկերն արտագծեք: Այն երեք հավասար, միանման մասերի բաժանեք: Ներկե՛լը քեզ կօգնի:



11. Ուղղանկյունների համարներն ասա:



ԲԱԺԱՆՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ

Թվաբանական երեք գործողությունների մասնակիցների անունները գիտենք:

4-րդ գործողության՝ բաժանման մասնակիցների անունները սովորենք:

$$\text{բաժանելի} : \text{բաժանարար} = \text{քանորդ}$$

թիվը, որը
բաժանում ենք

թիվը, որի
բաժանում ենք

բաժանման
արդյունքը



1. Պտուղները 3 զամբյուղում հավասար դասավորելու դեպքում ամեն զամբյուղում քանի պտուղ կդրվի: Համապատասխան գործողությունը գրիր:

ա)



բ)



2. Ըստ օրինակի հաշվեք և հիմնավորեք:

$$18 : 2 = 9 \text{ և } 18 : 9 = 2, \text{ քանի որ } 2 \times 9 = 18:$$

ա) $27 : 3,$

գ) $8 : 2,$

ե) $16 : 8,$

է) $26 : 2,$

բ) $14 : 7,$

դ) $12 : 1,$

զ) $28 : 2,$

ը) $72 : 9:$



3. Ուղղանկյան կեսը, քառորդն ու երրորդ մասերը

1. Որևէ թղթից տետրի էջի չափ 3 ուղղանկյուն գծեք, կտրեք:
2. Մի ուղղանկյունն ուշադիր ծալելով 2 հավասար մասերի բաժանեք: Մկրատով կիսեք:
3. Քո և ընկերոջդ ստացած կեսերը համեմատեք:
4. Քննարկեք՝ ինչն էն դրանք տարբեր կամ հավասար:
5. Մյուս ուղղանկյունը երկու անգամ ծալելով 4 հավասար մասերի բաժանեք: Մկրատով այդ քառորդ մասերն իրարից անջատեք:
6. Քո և ընկերոջդ ստացած քառորդ մասերը համեմատեք:
7. Քննարկեք՝ ինչն էն դրանք տարբեր կամ հավասար:
8. Երրորդ ուղղանկյունը ծալելով 3 հավասար մասերի բաժանեք:
9. Նույն կերպ քննարկեք:



4. Շրջանի կեսը ու քառորդը


1. Կլոր առարկայի միջոցով (ափսե, բաժակ, ծաղկաման, գրչաման...) որևէ թղթից 2 շրջան կտրեք:
2. Մի շրջանն ուշադիր ծալելով 2 հավասար մասերի բաժանեք: Մկրատով կիսեք:
3. Քո և ընկերոջդ ստացած կեսերը համեմատեք:
4. Քննարկեք՝ ինչն էն դրանք տարբեր կամ հավասար:
5. Մյուս շրջանը երկու անգամ ծալելով 4 հավասար մասերի բաժանեք: Մկրատով այդ քառորդ մասերն իրարից անջատեք:
6. Քո և ընկերոջդ ստացած քառորդ մասերը համեմատեք:
7. Քննարկեք՝ ինչն էն դրանք տարբեր կամ հավասար:




5. Որոշե՞ք՝ ամբողջի մեջ ամեն խմբից քանիսը կան: Համապատասխան գործողությունը գրեք:




ա)




բ)




6. Յուրաքանչյուր նկարի առարկաները պիտի 4-ական տեղավորենք տուփերում: Բաժանումով որոշիր՝ ամեն դեպքում քանի՞ տուփ անհրաժեշտ կլինի:



ա)




բ)



գ)



7. Որոշիր, թե ամեն բաժանումը քանի միավոր է:
62, 84, 58, 76 թվերն ուղղի վրա տեղադրիր:



8. Հաշվեք:

ա) $72 : 9,$

դ) $9 : 3,$

է) $7 \times 9 + 18,$

բ) $49 : 7,$

ե) $6 : 2,$

ը) $34 + 4 \times 7,$

զ) $45 : 9,$

զ) $8 \times 8 + 29,$

թ) $57 + 4 \times 6:$



9. Հաշվիր, թե **Ա** և **Բ** դեպքերում մրցույթին քանի մարզիկ է մասնակցում: **Ա** նկարի ամեն նավակում 2 մարզիկ կա, **Բ** նկարի նավակներում՝ 5 - ական:



Ա



Բ





10. Արտագրեք: Նկարների օգնությամբ պակասող թվերը որոշեք:

$$18 : 6 = \square$$


$$18 : \square = 6$$

$$6 \times \square = 18$$






11. Եթե միրգն արկղերի մեջ հավասար բաժանես, ամեն արկղում քանի դեղձ կլինի: Բացատրիր, թե ինչպես կբաժանես:



12. Ամեն երեխայի 4 բալ պիտի տանք: Այսքան բալը քանի երեխայի կբավականացնի:




13. Ըստ նկարների պակասող թվերը որոշեք:

$$20 : 2 = \square$$

$$\square : \square = \square$$


$$\square \times \square = \square$$



$$12 : 6 = \square$$


$$\square : \square = \square$$

$$\square \times \square = \square$$







14. Քննարկեք: Որոշեք, թե այս մեքենաներն ինչ գործողություններ են կատարում: Պակասող թվերը որոշեք: Բացատրեք:




- 8 ○ 5 → 3
- 6 ○ 2 → 4
- 5 ○ 4 →
- 14 ○ 9 →
- 19 ○ 14 →
- 17 ○ 9 →
- 23 ○ 13 →
- 65 ○ 33 →



- 8 ○ 5 → 13
- 6 ○ 2 → 8
- 5 ○ 4 →
- 14 ○ 9 →
- 19 ○ 14 →
- 7 ○ 9 →
- 23 ○ 13 →
- 65 ○ 33 →
- 55 ○ 24 →
- 72 ○ 16 →



- 8 ○ 5 → 40
- 9 ○ 6 →
- 6 ○ 7 →
- 6 ○ 8 →
- 9 ○ 7 →
- 7 ○ 9 →
- 23 ○ 4 →
- 35 ○ 2 →
- 7 ○ 11 →
- 8 ○ 10 →



- 8 ○ 2 → 4
- 9 ○ 3 →
- 27 ○ 3 →
- 24 ○ 6 →
- 24 ○ 8 →
- 21 ○ 3 →
- 21 ○ 7 →
- 45 ○ 9 →
- 54 ○ 6 →
- 63 ○ 7 →



15. Հաշվիր:

ա) 9×1 ,

գ) $9 : 1$,

ե) 14×7 ,

ե) 15×1 ,

բ) $54 : 9$,


դ) $63 : 9$,

զ) 18×4 ,


ը) $56 : 8$:



16. Յուրաքանչյուր նկարում պատկերված առարկաները 3 խմբերի միջև հավասար բաժանիր: Ամեն դեպքում մեկի բաժինը բաժանումով հաշվիր:




ա)



բ)



գ)



դ)




ե)



զ)




17. Առարկաները շրջանում գրված թվով թվով հավասար մասերի բաժանիր: Ինչ կստացվի:



ա)




բ)



զ)



ը)



ե)



զ)



18. Փուչիկները երեխաներին հավասար բաժանեցի: Ամեն մեկը քանի՞ փուչիկ ստացավ:




19. Ըստ նկարի տետրիդ մեջ թվերը լրացրու:

$$32 : 4$$

$$\underline{\quad} : \underline{\quad}$$

$$\underline{\quad} \times \underline{\quad}$$





20. Նկարներից օգտվելով՝ ըստ օրինակի բազմապատկման և բաժանման համապատասխան գործողությունները տեսրերում գրեք, հաշվեք:




$$4 \times 3 = 12 \text{ (կոճակ)}$$

ա) $12 : 3 =$
 $12 : 4 =$




բ)


$$5 \times \dots$$




գ)



դ)




ե)




զ)




21. Տետրումդ նկարիր: Ըստ արտահայտության
խմբավորիր: Հաշվիր:



$$14 : 2$$



$$14 : 7$$



$$12 : 2 \text{ և } 12 : 4$$



$$12 : 3$$



22. Արտագրիր: * -ի փոխարեն այնպիսի թվեր գրիր, որ հավասարությունները ճիշտ լինեն:

ա) $7 \times * = 28,$

ե) $28 : 7 = *,$

բ) $6 \times * = 54,$

զ) $54 : 6 = *,$

գ) $* \times 8 = 32,$

է) $32 : 8 = *,$

դ) $* \times 7 = 63,$

ը) $63 : 7 = *:$



23. Հաշվիր՝ բաժանման հարցը տալով:

ա) $9 : 9$ (բաժանելիի մեջ բաժանարարից ամենաշատը քանի՞ հատ կա):

բ) $4 : 4,$ $32 : 4,$ $28 : 4,$

գ) $7 : 7,$ $35 : 7,$ $56 : 7,$

դ) $8 : 8,$ $48 : 8,$ $72 : 8,$

ե) $6 : 6,$ $24 : 6,$ $54 : 6:$



24. Ըստ օրինակի բոլոր թիթեռների «հասցեները» տեսրումդ գրիր:

| | 0 | 2 | 4 | 6 | 8 |
|---|---|---|---|---|---|
| Ա | | | | | |
| Բ | | | | | |
| Գ | | | | | |
| Դ | | | | | |
| Ե | | | | | |
| Զ | | | | | |


| | 1 | 3 | 5 | 7 | 9 |
|---|---|---|---|---|---|
| Ա | | | | | |
| Բ | | | | | |
| Գ | | | | | |
| Դ | | | | | |
| Ե | | | | | |
| Զ | | | | | |

ա) (0, Ա),...

բ)



25. Օրինաչափությունը պարզիր: Արտագրիր՝ թվերը լրացնելով:



26. Հաշվեք: Արդյունքը բազմապատկումով ստուգեք: Ինչ կարևոր բան նկատեցիք: Ուրիշ: Գրանցեք:

- | | | | |
|-----------|-----------|-----------|------------|
| 1) 0 : 5, | 4) 0 : 6, | 7) 9 : 9, | 10) 8 : 8, |
| 2) 0 : 7, | 5) 5 : 1, | 8) 6 : 6, | 11) 9 : 1, |
| 3) 0 : 9, | 6) 8 : 1. | 9) 5 : 5, | 12) 6 : 1: |

ՏԱՍՆՅԱԿՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄ ՄԻԱՆԻՇ ԹՎԻ

Մինչև հիմա միանիշ թվերի բազմապատկման աղյուսակների օգնությամբ էինք բաժանում, քանի որ աղյուսակներից քեզ հայտնի թվերն էինք բաժանում:

Միանիշ թվերի բազմապատկումից հետո ամենահեշտ բազմապատկումը 10-ով բազմապատկումն է, հիշում ես:

Այ հիմա էլ դա կօգտագործենք:

$$3 \times 10 = 30, \text{ ուրեմն } 30 : 10 = 3 \text{ և } 30 : 3 = 10:$$

Այլ կերպ էլ նայենք սրան: 3 հատ գնդակ : 3 = մի գնդակ (երեք հավասար մասի բաժանելը հիշիր): 3 հատ խնձոր : 3 = մի խնձոր և այլն:

Այսինքն՝ նաև **3 տու. : 3 = 1 տու.:** $30 : 3 = 10$



1. Օրինակը քննարկեք: Մյուս գործողությունները տեսրերում կատարեք:

$$4 \text{ տու.} : 2 = 2 \text{ տու.} \quad 40 : 2 = 20:$$

ա) $6 \text{ տու.} : 3.$

գ) $8 \text{ տու.} : 4,$

ե) $80 : 2$

բ) $5 \text{ տու.} : 5,$

դ) $9 \text{ տու.} : 3,$

զ) $60 : 2:$



2. Հաշվիր:

ա) $10 \times 4,$

գ) $8 \times 10,$

ե) $60 : 6,$

բ) $5 \times 10,$

դ) $20 : 10,$

զ) $70 : 10:$



3. Ըստ նկարների գործողությունը գրիր: Հաշվիր: Համապատասխան քանակի առարկաներ նկարիր:



2 անգամ շատ



$$3 \times 2 = 6$$



2 անգամ ...
շրջան



$$4 : 2 = 2$$

ա)



2 անգամ շատ
քառակուսի

բ)



3 անգամ շատ
եռանկյուն

Քանի որ $6 = 2 \times 3$, ուրեմն $6 -$ ը $2 -$ ից **3 անգամ մեծ** է:
Նկատենք՝ $6 : 2 = 3$:

Նույն բազմապատկումից հետևում է նաև, որ $6 -$ ը $3 -$ ից **2 անգամ մեծ** է: Նկատենք՝ $6 : 3 = 2$:

Բացի այդ, կարծում են, համաձայն ես, որ եթե ես քեզանից մեծ եմ, ապա դու ինձանից փոքր ես:

Այստեղ էլ ստացվում է՝ $2 -$ ը $6 -$ ից **3 անգամ փոքր** է, իսկ $3 -$ ը $6 -$ ից **2 անգամ է փոքր**:

Պարզվեց, որ **քանորդը ցույց է տալիս, թե բաժանելին** (առաջին թիվը) **բաժանարարից քանի անգամ է մեծ**:

Համեմատենք մեր իմացածի հետ:

$6 - 3 = 3$ նշանակում է՝ 6-ը 3-ից **3-ով ավելի է, 3-ով մեծ է**:

$6 : 3 = 2$ նշանակում է՝ 6-ը 3-ից **2 անգամ ավելի է, 2 անգամ մեծ է**:

Կամ, 54 - ից 6 անգամ փոքր թիվը 8-ն է, որովհետև
 $54 : 6 = 8$, քանի որ $54 = 6 \times 8$:



4. Արտագրեք: Ամեն թվի վերևում նրանից 3 - ով մեծ թիվը գրեք, իսկ ներքևում՝ 3 անգամ մեծ թիվը: Արդյունքները ստուգեք:

11

8 7 9 5 6 11 25 31

24



5. Ճագարի տանը Վինի-Թուխը 4 բանկա մեղր կերավ, իսկ Դնչիկը՝ 2 անգամ քիչ: Դնչիկը քանի բանկա մեղր կերավ:



6. Արմանը 6 շուն և 3 անգամ քիչ թուրթակ ունի: Նա քանի թուրթակ ունի:



7. Կաշաղակը 27 տարի է ապրում, ծիծեռնակը՝ 3 անգամ պակաս: Ծիծեռնակը քանի տարի է ապրում:



8. Հայրս 44 տարեկան է: Եղբայրս նրանից 2 անգամ փոքր է: Եղբայրս քանի տարեկան է:



9. Հաշվիր:

ա) $80 : 8$, բ) $90 : 3$, գ) $60 : 2$:



10. Թվերը լրացնելով արտագրիր:

ա) $\bigcirc : 2 = 1$, բ) $\bigcirc : 7 = 5$, գ) $\bigcirc : 5 = 8$:



11. Ձյունանուշը 7 թզուկների համար 28 բազմագույն սրբիչներ գնեց: Նրանց դարակներում հավասար դասավորեց: Ամեն մեկի դարակում քանի սրբիչ դրեց:



12. Եթե 56 գիրքը 7 հավասար կապոցներ անենք, ամեն կապոցի մեջ քանի գիրք կլինի:



13. 56 խաղալիք մեքենաներս 8 տուփի մեջ դասավորեցի: Բոլոր տուփերում հավասար քանակով մեքենաներ տեղավորվեցին: Ամեն տուփի մեջ քանի մեքենա դրեցի:



14. 16 –ից 5-ով մեծ և 5 անգամ մեծ թվերը գրիր: Դրանք համեմատիր: Եզրակացությունդ համապատասխան նշաններով գրանցիր:



15. Իրար ստուգելով հաշվեք:


ա) 6×9 , գ) $8 : 1$, ե) $32 : 4$, է) $56 : 7$,
բ) $35 : 5$, դ) $24 : 8$, զ) $28 : 7$, ը) 8×9 :





16. 8 միանման շարքերում 48 վարդենի տնկեցին: Ամեն շարքում քանի վարդենի եղավ:



17. Որոշեք, թե 48-ն ինչպես է ստացվել: Նույն կերպ մյուս երկու եռանկյունների թվերը գտեք:



ա)



բ)



18. Արտագրիր: Թվերը լրացրու:

ա) $+4$

| | | | | | | | | |
|----|---|----|---|----|----|---|----|---|
| 7 | 4 | 19 | 8 | | | 9 | 12 | 6 |
| 11 | | | | 20 | 28 | | | |

բ) $\times 4$

| | | | | | | | | |
|----|---|----|---|----|----|---|----|---|
| 7 | 4 | 19 | 8 | | | 9 | 12 | 6 |
| 28 | | | | 20 | 12 | | | |



19. Հաշվեք: * -ը որոշեք:

- ա) $8 : 1,$ $25 : 5,$ $42 : 7,$
- բ) $7 : 1,$ $32 : 8,$ $63 : 9,$
- գ) $5 : 1,$ $27 : 3,$ $45 : 5,$
- դ) $6 : 1,$ $24 : 8,$ $64 : 8,$
- ե) $1 : 1,$ $42 : * = 7,$ $56 : * = 7:$



20. Շախմատի խմբակի անդամներից 45-ը տղա են, նրանցից 5 անգամ քիչը՝ աղջիկ: Խմբակում քանի աղջիկ է պարապում:



21. Արտագրեք: Թվերը լրացրեք:

$$36 = \boxed{\times 1} + \bigcirc$$

$$36 = \boxed{\times 7} + \bigcirc$$

$$36 = \boxed{\times 11} + \bigcirc$$

$$36 = \boxed{\times 2} + \bigcirc$$

$$36 = \boxed{\times 8} + \bigcirc$$

$$36 = \boxed{\times 12} + \bigcirc$$

$$36 = \boxed{\times 3} + \bigcirc$$

$$36 = \boxed{\times 9} + \bigcirc$$

$$36 = \boxed{\times 13} + \bigcirc$$

$$36 = \boxed{\times 4} + \bigcirc$$

$$36 = \boxed{\times 10} + \bigcirc$$

$$36 = \boxed{\times 20} + \bigcirc$$



22. 24 աշակերտ 3 խմբի են բաժանվել: Խմբերում նույն թվով աշակերտներ են: Մի խմբում քանի՞ աշակերտ կա:



23. Արտագրիր՝ պակասող թվերը լրացնելով:

ա) $31 = 20 + \dots$,

ե) $55 = 15 + \dots$,

բ) $65 = 50 + \dots$,

զ) $43 = \dots + 30$,

գ) $84 = \dots + 70$,

է) $68 = 60 + \dots$,

դ) $95 = \dots + 80$,

ը) $76 = \dots + 16$:



24. Օրինակը հասկացիր: Հաջորդ երկու դեպքում որոշիր, թե ընդամենը քանի՞ մկնիկ կա: Դրանցից քանիսն են սպիտակ, քանիսը՝ սև:



սև՝ $3 \times 3 + 2 \times 2 + 1 = 15$

սպիտակ՝ $3 + 2 \times 2 = 7$ ընդամենը՝ $15 + 7 = 22$



Տանը և դպրոցում 2

ԵՐԿՆԻՇ ԹՎԻ ԲԱԺԱՆՈՒՄ ՄԻԱՆԻՇ ԹՎԻ

Հասկանանք, թե ցանկացած երկնիշ թիվ միանիշ թվի բաժանելիս ինչպես է պետք մտածել:

4 արկղ խնձորն ու 2 տոպրակ սալորը 2 ընտանիքների միջև հավասար բաժանելը պատկերացրու: Համաձայն ես, չէ՞, որ խնձորն էլ, սալորն էլ առանձին-առանձին 2 հավասար մասի պիտի բաժանենք:

Այսինքն՝ ամեն ընտանիքի պիտի տանք 4 արկղ խնձորի կեսը՝ **2 արկղ խնձոր** և 2 տոպրակ սալորի կեսը՝ **մի տոպրակ սալոր**:

Այդպես էլ երկնիշ թվերն են միանիշի բաժանում: Օրինակ,

$$48 : 2 \text{ հաշվելիս կհիշենք, որ } 48 = 40 + 8:$$

40 - ն ու 8 - ը առանձին - առանձին 2 - ի կբաժանենք:

$$\text{Ուրեմն, } 48 : 2 = (40 + 8) : 2 = 40 : 2 + 8 : 2 = 20 + 4 = \mathbf{24}:$$

Հիշում ես, որ բազմապատկելիս էլ էինք նման կերպ մտածում:

$$48 \times 2 = (40 + 8) \times 2 = 40 \times 2 + 8 \times 2 = 80 + 16 = \mathbf{96}:$$



1. Ըստ օրինակի բաժանիր:

$$(30 + 12) : 3 = 30 : 3 + 12 : 3 = 10 + 4 = 14:$$

ա) $(40 + 16) : 4,$

գ) $(30 + 15) : 3,$

բ) $(60 + 12) : 6,$

դ) $(50 + 30) : 5:$



2. Արտագրեք: Պակասող թվերը լրացրեք: Արդյունքներն ընկերոջդ հետ ստուգեք:

| | | | | | | | | | | | |
|------------|---|---|---|---|---|---|----|---|---|---|---|
| $\times 2$ | 3 | 8 | 0 | 1 | 4 | 9 | 10 | 6 | 2 | 5 | 7 |
| $\times 3$ | | | | | | | | | | | |
| $x?$ | | | | | | | | | | | |



3. Ըստ օրինակների բաժանիր:

$$65 : 5 = (50 + 15) : 5 = 50 : 5 + 15 : 5 = 10 + 3 = 13:$$

$$55 : 5 = (50 + 5) : 5 = 50 : 5 + 5 : 5 = 10 + 1 = 11:$$

ա) $48 : 4,$

ե) $39 : 3,$

բ) $84 : 2,$

զ) $77 : 7,$

գ) $69 : 3,$

է) $56 : 4,$

դ) $68 : 2,$

թ) $45 : 3:$



4. Որոշիր, թե քառակուսու մեջ ինչ գործողության նշան է, * -ի փոխարեն՝ ինչ թիվ: Հավասարությունը պիտի ճիշտ լինի:

ա) $46 \square * = 63,$

դ) $* \square 43 = 18,$

բ) $8 \square * = 48,$

ե) $9 \square * = 45,$

գ) $64 \square * = 8,$

զ) $36 \square * = 6:$



5. Արտագրեք՝ թվերը լրացնելով: Արդյունքները համեմատեք:

$$8 \xrightarrow{\times 3} \square \xrightarrow{:6} \bigcirc$$

$$12 \xrightarrow{\times 3} \square \xrightarrow{:6} \bigcirc$$

$$6 \xrightarrow{\times 3} \square \xrightarrow{:6} \bigcirc$$

$$10 \xrightarrow{\times 3} \square \xrightarrow{:6} \bigcirc$$

$$4 \xrightarrow{\times 3} \square \xrightarrow{:6} \bigcirc$$

$$2 \xrightarrow{\times 3} \square \xrightarrow{:6} \bigcirc$$

$$5 \xrightarrow{\times 3} \square \xrightarrow{:3} \bigcirc$$

$$15 \xrightarrow{\times 3} \square \xrightarrow{:3} \bigcirc$$

$$4 \xrightarrow{\times 3} \square \xrightarrow{:2} \bigcirc$$

$$10 \xrightarrow{\times 3} \square \xrightarrow{:2} \bigcirc$$



6. Օրինակի նման որոշեք՝ ամեն շերտի համար այն քանի՞ հավասար մասի կարելի է բաժանել:




1, 2, 4, 5, 10 և 20 մասերի



7. Շրջանները մկների քանակով հավասար մասերի են բաժանված: Այդ հիշելով՝ մկների խմբերին համապատասխան շրջանները որոշեք: Օրինակը կօգնի:

Օրինակ՝ ա \rightarrow 2





8. Արտագրիր: Պակասող թվերը լրացրու:

$$8 \xrightarrow{\times 2} \bigcirc \xrightarrow{: 2} \bigcirc$$


$$\bigcirc \xrightarrow{\times 2} 10 \xrightarrow{: 2} \bigcirc$$

$$2 \xrightarrow{\times 6} \bigcirc \xrightarrow{: 3} \bigcirc$$

$$\bigcirc \xrightarrow{\times 6} \bigcirc \xrightarrow{: 3} 6$$



9. Դպրոցից վերադառնալիս Սոնան պետք է գնումներ կատարի: Այն ճանապարհը գրանցիր, որը նա պիտի անցնի **հաց, օրաթերթ, ձուկ, նամականիշ, ծաղկեփունջ** գնելու համար:



10. Նկարներն ուսումնասիրիր: Տեսրումդ վերջին գործողությունների համապատասխան նկարներ արա:



$$6 - 2 = 4 \quad 6 : 2 = 3$$

1) $12 - 3$, $12 : 3$,



$$8 - 2 = 6 \quad 8 : 2 = 4$$

2) $15 - 3$, $15 : 3$




11. Աղյուսակը տեսրումդ գշիր: Նշված թվաբանական գործողությունները կատարիր: Արդյունքները համապատասխան վանդակներում գրիր:

| | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
|-----|---|---|---|---|---|---|---|---|----|
| + 2 | | | | | | | | | |
| x 2 | | | | | | | | | |
| - 2 | | | | | | | | | |
| : 2 | | | | | | | | | |



12. Գծապատկերին նայելով հաշվեք՝ գրապահարանի երկու դարակում միասին քանի՞ գիրք կա:



13. Քույրս 12 գնդակ ունի, ես՝ 2 անգամ պակաս: Կարո՞ղ ես որոշել՝ երկուսս քանի՞ գնդակ ունենք:



14. Առաջին օրը կրպակը 18 փաթեթ թերթ ստացավ, իսկ երկրորդ օրը՝ 2 անգամ պակաս: Երկու օրում կրպակը քանի՞ փաթեթ թերթ ստացավ:



15. Անին 18 տարեկան է: Աստղիկը նրանից 3 անգամ փոքր է: Աստղիկն Անիից քանի՞ տարով է փոքր:

ԹՎԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎՈՒՄ



1. Հաշվիր:

ա) $80 : 10,$

ե) $(7 + 4) \times 8,$

բ) $40 : 2,$

զ) $(8 + 8) \times 6,$


գ) $(30 + 3) \times 3,$

է) $(30 + 3) : 3,$

դ) $(6 + 9) \times 5,$

ը) $(8 + 8) : 4:$

Հիշում ես, որ $19 + 23 \times 3$ -ի նման արտահայտություններում նախ բազմապատկումն ենք անում, հետո՝ գումարումը: Կարմիր վանդակները հաշվենք:



$3 \times 6 + 3$ կամ $3 \times 6 + 12 : 4:$

Ամեն դեպքում, **բազմապատկումը և բաժանումը** (բազմապատկման հակառակ գործողությունը) **գումարումից ու հանումից առաջ են կատարվում**: Մնացածը՝ ձախից աջ:

① ③ ②
 Ուրեմն, $3 \times 6 + 12 : 4$



2. Գործողությունների հերթականությունը որոշեք: Հաշվեք: Արդյունքներն ստուգեք:

ա) $18 \times 4 - 37,$

դ) $64 + 28 : 7,$

ե) $24 \times 3 - 8 \times 9,$

բ) $19 + 23 \times 3,$

է) $64 : 8 + 5 \times 9,$

ը) $72 : 8 + 24 : 1,$

գ) $6 \times 7 + 24 : 6,$

զ) $4 \times 8 - 56 : 7,$

թ) $42 : 6 + 8 \times 8:$



3. Օրինակի նման հաշվիր:

$$(60 + 4) : 2 = 60 : 2 + 4 : 2 = 30 + 2 = 32:$$

ա) $(60 + 6) : 6,$

գ) $(90 + 3) : 3,$

բ) $(80 + 8) : 4,$

դ) $(20 + 8) : 2:$



4. Ամենամեծ միանիշ թվից 6 անգամ մեծ թիվ ասա:





5. Ընկերոջս հետ հաշվել ենք նույն արտահայտությունը՝ $35 - 5 \times 2$: Ես 25 եմ ստացել, ընկերս՝ 60: Ո՞վ է սխալվել և որտե՞ղ:



6. Ընկերոջս հետ հաշվել ենք նույն արտահայտությունը՝ $35 - 5 + 4$: Ես 26 եմ ստացել, ընկերս՝ 34: Ո՞վ է սխալվել և որտե՞ղ:



7. Արտագրիր: Թվային զույգերին համապատասխան վանդակներում նկարիր՝ **Ա** - ում՝ շրջաններ, **Բ** - ում՝ եռանկյուններ:



$(1, 1), (1, 5), (2, 2), (2, 3),$
 $(3, 3), (4, 1), (5, 1), (5, 5):$

$(1, 3), (2, 4), (5, 4), (3, 1),$
 $(3, 5), (4, 2), (4, 4), (5, 3):$



8. Բաժանելին գումարի տեսքով գրելով՝ բաժանիր:

$$98 : 7 = (70 + 28) : 7 = 10 + 4 = 14:$$

ա) $39 : 3,$

գ) $88 : 4,$

ե) $34 : 2,$


բ) $86 : 2,$

դ) $42 : 3,$



զ) $84 : 7:$



9. Այս պատկերները տեսրում նույնությամբ գծիր:



10. Որոշիր, թե առարկաների ամեն խմբում քանի՞ զույգ կա: Ամեն դեպքում քանի՞ առարկա կա:



Ա

Բ

Գ

Դ

Ա - 14 քառակուսի, 7 զույգ


Վերևում նկատեցիր, որ Ա և Բ խմբերում զույգերն առանձնացնելուց հետո առարկա չի մնում: Այդպիսի քանակը, **թվերը զույգ են անվանում:**


Այսինքն՝ 14, 8, 6... զույգ թվեր են:


Գ և Դ դեպքում զույգեր առանձնացնելուց հետո մեկական առարկա ավելանում է:


Այդպիսի քանակը, **թվերը կենտ են անվանում:**

Այսինքն՝ 13, 9, 7... կենտ թվեր են:

 **11.** Բոլոր միանիշ զույգ թվերը գրեք: Դրանք 7 անգամ մեծացրեք:

 **12.** Բոլոր միանիշ կենտ թվերը գրեք: Դրանք 5 անգամ մեծացրեք:

 **13.** Շրջանները փիսոների քանակով հավասար մասերի են բաժանված: Այդ հիշելով՝ փիսոների խմբերին համապատասխան շրջանները որոշիր: Օրինակ **գ→1**



ա) բ) գ)



դ) ե) զ)



է)



ը)



14. Արտագրեք: Անհրաժեշտ նշանները՝ +, x, =, >, < ավելացրեք այնպես, որ գրվածները ճիշտ լինեն:

9 + 5 - 3 = 11

9 5 3 < 17

9 5 3 33

9 5 3 = 17

9 5 3 = 1

9 5 3 42

9 + 5 - 3 7

9 5 3 24

9 5 3 21



15. Արտահայտությունների արժեքները հաշվիր:

ա) 28 + 5 x 11,

է) 73 - 6 x 8,

բ) 6 x 7 + 29,

զ) 43 - 27 + 32 : 4,

գ) 8 x 4 + 28,

է) 98 - 23 x 4 + 24,

դ) 9 x 6 - 28,

ը) 48 : 6 + 14 x 5:



16. Ընկերոջս հետ հաշվել ենք նույն արտահայտությունը՝ 36 - 6 : 6: Ես 5 եմ ստացել, ընկերս՝ 35: Ո՞վ է սխալվել և որտեղ:



17. Ընկերոջս հետ հաշվել ենք նույն արտահայտությունը՝ 6 x 7 - 5: Ես 12 եմ ստացել, ընկերս՝ 37: Ո՞վ է սխալվել և որտեղ:



18. 4 դարակում 84 գիրքը հավասար դասավորեցի: Ամեն դարակի մեջ քանի գիրք դրեցի:



19. 4 կոստյումի համար 16 մ կտոր է ծախսվել: Մի կոստյումի համար քանի մետր է ծախսվել:

- 😊 **20.** 3 միանման դույլի մեջ 24 լ կաթ է տեղավորվում: Մի դույլի տարողությունն ինչքան է:
- 😊 **21.** Տատիկը 56 տարեկան է, թոռնիկը՝ 8: Տատը թոռից քանի անգամ է մեծ:
- 😊 **22.** Փողոցի մի կողմում 72 տուն կա: Դրանք փողոցի մյուս կողմի տներից 9 անգամ շատ են: Երկրորդ կողմում քանի տուն կա:
- 😊 **23.** Օրինակի նման արտահայտությունների արժեքները հաշվիր:

$$4 \times 7 + 45 : 9 = 28 + 5 = 33:$$

$$81 : 9 + 6 \times 8 = 9 + 48 = 57:$$

ա) $6 \times 6 + 32 : 4,$

ե) $24 \times 3 - 5 \times 9,$

բ) $3 \times 9 + 64 : 8,$

զ) $18 \times 4 - 81 : 9,$

գ) $72 : 8 + 4 \times 9,$

է) $16 \times 5 - 72 : 8,$

դ) $49 : 7 + 8 \times 8,$

ը) $8 \times 5 - 45 : 9:$

Խնդիր. Մի բնակարանում 9 մարդ էր ապրում, իսկ մյուսում՝ 6-ով պակաս: Երկրորդում քանի անգամ քիչ մարդ էր ապրում:

Լուծում

1-ինում – 9 մարդ,

2-րդում – 9-ից 6-ով պակաս, այսինքն՝ $9 - 6 = 3$ (մարդ):

9 -ը 3-ից **3 անգամ մեծ է** ($9 : 3 = 3$):

- 😊 **24.1** - ին դասարանում 6 պահարան կա, իսկ 2 - րդում՝ 3 - ով պակաս: Երկրորդում քանի անգամ շատ պահարան կա:



Տանը և
դպրոցում 2

ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

$$54 \times 1 = 54$$

Հիշում ես, որ սա նշանակում է՝ 54 –ը 54 հատ 1 է:

$54 : 1 = 54$ նշանակում է գրեթե նույնը՝ 54 –ի մեջ 54 հատ 1 կա:

54 –ի մեջ 1 հատ 54 կա, ուրեմն՝ $54 : 54 = 1$:

Նման ձևով, **ցանկացած թիվ իրեն բաժանելուց 1 է ստացվում:**

$$12 : 12 = 1, 34 : 34 = 1 \text{ և այլն:}$$

Եվ, իհարկե, $12 : 1 = 12, 34 : 1 = 34$ և այլն:

0-ի մեջ (ոչինչի մեջ) էլ ցանկացած թվից ոչ մի հատ չկա՝ 0 հատ կա:

Այսինքն, $0 : 54 = 0, 0 : 34 = 0$ և այլն:

0-ի և ցանկացած թվի քանորդը 0 է:



1. Ընկերոջդ հետ հաշվեք (**Ա** - ն դու հաշվիր, **Բ** - ն՝ զույգդ): Ձեր արդյունքները համեմատեք: Նկատած օրինաչափությունը ձևակերպեք: Ներկայացրեք:

Ա

1) $(30 + 6) : 3,$

2) $(40 + 5) : 5,$

Բ

1) $30 : 3 + 6 : 3,$

2) $40 : 5 + 5 : 5:$



2. Իսկ հանման ժամանակ էլ է այդպե՛ս:
Ընկերոջդ հետ հաշվեք (Ա-ն դու հաշվիր, Բ-ն՝ զույգդ):
Ձեր արդյունքները համեմատեք:

Ա

1) $(30 - 6) : 3,$

2) $(40 - 5) : 5,$

Բ

1) $30 : 3 - 6 : 3,$

2) $40 : 5 - 5 : 5:$

8 մ կտորից 2 միանման կոստյում կարեցինք: Իհարկե, մի կոստյումի համար ծախսված կտորը 2 անգամ քիչ կլինի, այսինքն՝ 4 մ ($8 : 2 = 4$):

Իսկ «Առանց մի կոստյումի համար ծախսված կտորը որոշելու, կարող ենք որոշել՝ 16 մ նույն կտորից քանի՞ նման կոստյում կկարենք» հարցին ինչպես կպատասխանեք:

Հուշեմ՝ 16 մ-ը 8 մ-ից 2 անգամ ավելի է:

Ճիշտ եք, եթե 8-ի մեջ ինչ-որ բան 2 հատ կա, ապա՝

8 – ից 2 անգամ ավելիի (16) մեջ **2 անգամ ավելի** կլինի, այսինքն՝

2 անգամ 2 հատ, ուրեմն՝ $2 \times 2 = 4$ հատ:

8 – ից 3 անգամ ավելիի (24) մեջ՝ **3 անգամ ավելի**, այսինքն՝
 $3 \times 2 = 6$ հատ,

8 – ից 6 անգամ ավելիի (24) մեջ՝ **6 անգամ ավելի**, այսինքն՝
 $6 \times 2 = 12$ և այլն:

Քանի որ $10 : 5 = 2$, ուրեմն, 2 անգամ մեծ թիվը նույն թվին բաժանելուց 2 անգամ մեծ քանորդ կստացվի, այսինքն՝ $20 : 5 = 4$ (2×2):

Առանց բաժանումն անելու կհաշվենք՝

$$30 : 5 = 3 \times 2 = 6$$

$$40 : 5 = 4 \times 2 = 8$$

$$50 : 5 = 5 \times 2 = 10$$

$$70 : 5 = 7 \times 2 = 14$$

$$80 : 5 = 8 \times 2 = 16 \text{ և այլն:}$$

Համաձայն ես, որ այսպես հաշվելը հարմար է:



3. Քննարկեք: Առանց բաժանելու որոշեք, թե * -ի փոխարեն ինչ թիվ պիտի լինի, որպեսզի մեր արած հետևությունը ճիշտ լինի:

ա) $12 : 3 = 4$

$24 : 3 = * \times 4,$

բ) $10 : 2 = 5$

$30 : 2 = * \times 5,$

գ) $12 : 3 = 4$

$24 : 3 = * \times 4,$

դ) $14 : 7 = 2$

$28 : 7 = * \times *:$



4. Հաշվիր:

ա) $6 \times 7 + 19,$

ե) $73 - 3 \times 8,$

բ) $8 \times 6 + 18,$

զ) $62 - 6 \times 3,$

գ) $12 : 4 + 58,$

է) $81 - 24 : 6,$

դ) $20 : 5 + 77,$

ը) $83 - 42 : 6:$




5. Քննարկեք: Որոշեք, թե \triangle , \bigcirc պատկերներն ի՛նչ թվեր են «թաքցնում»: Ընտրությունը բացատրեք:

$$\triangle + \triangle + \triangle + \triangle + \triangle + \triangle + \triangle + \bigcirc = 95$$



6. Առանց մատիտը թղթից կտրելու պատկերը գծիր (նույն գծի վրայով 2 անգամ անցնել չի կարելի):



ԵՐԿՆԻՇ ԹՎԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄ

Հիմա փորձենք երկնիշ թիվը երկնիշ թվի բաժանել:

Օրինակ, հաշվենք $48 : 12$ քանորդը: Պիտի պարզենք, թե **48 – ի մեջ ամենաշատը քանի՞ 12 կա:**

Կարելի է, իհարկե, փորձելով հաշվել:

Մի հատ 12 կա: 2 հատ 12, այսինքն՝ $2 \times 12 = 24$ կա: $3 \times 12 = 36$ կա: Մնացած 12-ն էլ կլինի չորրորդը:

Փաստորեն, հարցի պատասխանն այսպես գտանք. 48-ի մեջ մի հատ 12 կա, բայց այն վերցնելուց հետո էլի 12-ներ են մնում:

$$48 - \textcircled{12} = 36,$$

մեկ

$$\text{մնացած } 36 - \textcircled{12} = 24,$$

երկու

$$24 - \textcircled{12} = \textcircled{12} \text{ (վերջինը՝ չորրորդը):}$$

երեք

Բայց այսքան երկար հաշվելու փոխարեն կարելի է հնարամտորեն վարվել:

48 –ը մոտ 50 է, իսկ 12 –ը՝ մոտ 10 :

Մեզ հիմա հետաքրքրում է՝ 50 -ի մեջ ամենաշատը քանի՞ 10 կա: Անմիջապես գալիս է՝ 5 :

Բայց 5×12 -ը 48 -ից շատ է: Ուրեմն, ոչ թե 5 , այլ մեկով քիչ՝ 4 : Իրոք, $4 \times 12 = 48$:

Հավանական թվից սկսելով՝ շատ ավելի արագ գտանք քանորդը:



1. Օրինակի նման աջ կողմում տրված թվերից այն թիվն ընտրեք, որի դեպքում հավասարությունը ճիշտ կլինի:
Հիմնավորեք:

$48 : 24 = 2$ 1, 3, 2, 5, 4 քանի որ $2 \times 24 = 48$:

ա) $36 : 18$ 4, 2, 1, 3, 0

բ) $42 : 21$ 0, 5, 2, 1, 3

գ) $72 : 18$ 1, 3, 4, 2, 5

դ) $70 : 14$ 1, 2, 3, 4, 5:

ե) $36 : 12$ 4, 0, 2, 1, 3

զ) $44 : 11$ 5, 3, 1, 2, 4



2. Հաշվիր:

ա) $7 \times 9 + 4 \times 8$,


գ) $68 : 4 - 3 \times 5$,

բ) $48 : 6 + 14 \times 5$,

դ) $57 : 3 - 8 \times 2$:



3. Նկարը քեզ կօգնի հաշվելու՝ երկրորդ կշեռքին ինչքան խաղող կա:



4. Դահլիճի 3 շարքում 51 նստատեղ կա: Ամեն շարքում քանի՞ նստատեղ կա:



5. 7 վերնաշապիկի վրա 42 կոճակ կա: Մեկ նման վերնաշապիկի վրա քանի՞ կոճակ կա:



6. 2 ռետինը 36 դրամ արժեն: Մեկն ինչ արժե: Իսկ նման 4 ռետինն ինչ կարժենան:



7. Շենքի 3 մուտքում 39 բնակարան կա: Մի մուտքում քանի բնակարան կա: Իսկ 2 մուտքում:



8. Հիշում ես, որ՝ $84 : 7 = (70 + 14) : 7 = 10 + 2 = 12$: Այսպես բանավոր, մտքում հաշվելն ամենահարմարն է: Հաշվիր:

ա) $98 : 7$,

գ) $85 : 5$,

ե) $84 : 4$,

բ) $78 : 6$,

դ) $87 : 6$,

զ) $14 : 14$:



9. Աջ կողմում տրված թվերից այն թիվն ընտրեք, որի դեպքում հավասարությունը ճիշտ կլինի: Հիմնավորեք:

ա) $45 : 15$ 6, 2, 5, 3

բ) $56 : 14$ 0, 3, 4, 2

գ) $84 : 14$ 4, 6, 3, 5

դ) $65 : 13$ 4, 3, 1, 5



10. Հաշվեք: Արդյունքները համեմատեք:

ա) $54 : 18$,

ե) $90 : 15 + 70 : 14$,

բ) $60 : 12$,

գ) $38 \times 2 - 57 : 3$,

գ) $60 : 15$,

է) $16 \times 6 - 45 : 15$:

դ) $88 : 44 + 66 : 2$,



11. Հաջորդ պատկերը գծիր: Այլ տարբերակ չկան: Բացատրիր:





12. Պատկերում քանի քառակուսի կա: Արդյունքները համեմատեք: Քննարկեք:



13. Հաշվիր:

ա) $80 : 10$, $80 : 8$, $80 : 80$, $80 : 20$, $80 : 40$,

բ) $60 : 10$, $60 : 6$, $60 : 20$, $60 : 30$, $60 : 60$,

գ) $90 : 10$, $90 : 9$, $90 : 30$, $90 : 90$,

դ) $40 : 10$, $40 : 4$, $40 : 20$, $40 : 5$, $40 : 40$:



14. Քննարկեք: Որոշեք, թե գերանը 7 հավասար մասի բաժանելու համար այն քանի տեղից պետք է սղոցել:



15. Աշոտը, Գագիկն ու Վահանը գրատախտակի մոտ են կանգնած; ըստ որում Գագիկը մեջտեղում է: Առանց նրան տեղափոխելու ինչպե՞ս անենք, որ Գագիկը ծայրում հայտնվի:



16. Ժամում 35 կմ անցնող գնացքը մեկնումից 2 ժամ հետո տեղ հասավ: Գնացքը քանի կիլոմետր անցավ:

ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԴՐԱՆՑ ՉԱՓՈՒՄ



1. Վանդակավոր թղթի վրա կառուցումներ

1. Տեսրում երեք տարբեր եռանկյուն և մի քառակուսի գծեր:
2. Դրանց կողմերը չափեք:
3. Ընկերոջդ հետ տեսրերը փոխանակեք:
4. Չափումները ստուգեք:



2. Կտուցից մինչև պոչը

1. Ջույգիդ հետ թռչուններին ըստ նկարների չափեք (կտուցից մինչև պոչ):
2. Արդյունքները մյուս զույգերի արդյունքների հետ քննարկեք:




3. Կուբիստական նկարներ-1

1. Քառյակների բաժանվեք:
2. Խմբին տրված պատկերի եռանկյունները կտրեք:
3. Եռանկյունների կողմերի երկարությունները քանոնով չափեք:
4. Ամեն եռանկյան վրա համապատասխան երկարությունների գումարը մատիտով գրեք:
5. Այդ եռանկյուններով նոր նկար ստացեք:
6. Այդ նկարը թղթի վրա սոսնձեք, անվանեք:
7. Մյուս նկարների հետ նկարը ցուցադրեք:



4. Տրված հատվածները քանոնով չափեք: Ձեր արդյունքները համեմատեք:



5. Սա 2024 թ. մարտի օրացույցն է:

| | | | | | |
|------------|---|----|----|----|----|
| Երկուշաբթի | | 4 | 11 | 18 | 25 |
| Երեքշաբթի | | 5 | 12 | 19 | 26 |
| Չորեքշաբթի | | 6 | 13 | 20 | 27 |
| Հինգշաբթի | | 7 | 14 | 21 | 28 |
| Ուրբաթ | 1 | 8 | 15 | 22 | 29 |
| Շաբաթ | 2 | 9 | 16 | 23 | 30 |
| Կիրակի | 3 | 10 | 17 | 24 | 31 |

Ուսումնասիրիր: Հարցերին պատասխանիր:

1. Այս ամսին քանի՞ շաբաթ և կիրակի կա:
2. Այս ամսին քանի՞ օր ես դպրոց գնալու:
3. Քանի՞ օր դպրոց չես գնալու:
4. Այս ամսին քանի՞ շաբաթ կա:
5. Իսկ քանի՞ թերի շաբաթ կա:




6. Էլեկտրոնային ժամացույցի վրայի ժամանակը մեխանիկական ժամացույցի վրա տեսրունդ սլաքներով ցույց տուր:

ա) 1 : 15, բ) 9 : 30, գ) 12 : 20, դ) 8 : 25:



7. Ժամը քանիսն է: Էլեկտրոնային ժամացույցի վրա նույն ժամին ինչ կգրվի:



15 ժամ = քառորդ ժամ



1)



2)



3)



4)



5)



6)



7)



8)



9)



10)



11)



12)



8. Հաշվիր:

ա) $81 : 9 + 36 : 9$,

բ) $72 : 8 - 32 : 8$,

գ) $72 : 9 + 3 \times 8$,

դ) $6 \times 10 = 7 : 7$,

ե) $48 : 8 + 7 \times 8$,

զ) $45 : 5 + 6 \times 9$,

է) $8 \times 7 - 16 : 4$,

ը) $63 : 9 + 7 \times 7$,

թ) $9 \times 10 - 0 : 7$,

ժ) $7 \times 5 + 0 \times 6$:




9.

Լծակավոր կշեռքի պատրաստում


1. Աչքաչափով ձողիկը 2 հավասար մասերի բաժանող կետը գտեք, ապա նույնը քանոնի օգնությամբ արեք:
2. Այդ կետում ձողիկը ծակեք և միջով մեկ այլ ձողիկ (կամ լար) ուղղահայաց անցկացրեք:
3. Հորիզանական ձողիկի ծայրերից թելերով պլաստմասայից կափարիչներ կամ մեկանգամյա օգտագործման ափսեներ կախեք (որպես նժարներ):
4. Մանր առարկաների կշիռների (զանգվածների) հավասարությունը ստուգեք կամ՝ առարկաների բազմությունից նույնքան կշռող առարկաներ գտեք:



10. Մի խնձորն ինչքան է կշռում:



11. Մի խնձորը քանի՞ գրամ է կշռում:



12. Էլեկտրոնային ժամացույցի վրայի ժամանակը մեխանիկական ժամացույցի վրա տեսրունդ սլաքներով ցույց տուր:

ա) 13 : 40, բ) 8 : 50,

գ) 7 : 45, դ) 18 : 55:



Տանը և
դպրոցում 2






13. Ժամը քանիսն է: Էլեկտրոնային ժամացույցի վրա նույն ժամին ինչ կգրվի:




1)



2)




3)



4)



5)



6)



7)



8)



14.

Տարողության չափում

1. Բաժակի լիքը ջուր լցրեք:
2. Փորձով գտեք «Բաժակի ջուրն անոթի մեջ կտեղավորվի» հարցի պատասխանը և արդյունքը $<$, $>$ կամ $=$ նշանների միջոցով գրեք (բաժակ ... անոթ):
3. Բաժակով ջուր լցրեք անոթի մեջ՝ մինչև այն լցվի:
4. «Անոթի մեջ քանի բաժակ ջուր տեղավորվեց» հարցի պատասխանը ներկայացրեք (օրինակ՝ անոթը = ... բաժակ ձևով):
5. Որոշեք՝ անոթի տարողությունն է մեծ, թե բաժակինը: Քանի անգամ:



15. Հաշվիր:

ա) $72 : 8 + 55,$

բ) $54 : 6 + 49,$

գ) $28 + 42 : 6,$

դ) $39 + 45 : 9:$

ԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ



1.

Պատկերի վերականգնում

1. Ուսուցչի սեղանի վրայից մի պատառիկ վերցրու:
2. Պատկերի մնացած 3 պատառիկները ընկերներիդ մոտ գտիր:
3. Միասին 4 կտորներից պատկերը վերականգնեք:



2.

Բեկյալի երկարության հաշվում

1. Ձույգերի բաժանեք:
2. Հաշվեձողիկների օգնությամբ տարբեր (բաց կամ փակ) բեկյալներ կառուցեք, ծեփոնով ամրացրեք:
3. Բեկյալի երկարությունը (կողմերի երկարությունները) հաշվեք, արդյունքները գրանցեք:
4. Ձեր կազմած բեկյալը մյուսների կազմածների հետ համեմատեք (տեսակը, կողմերի քանակը, երկարությունը):



3.

Պատկերաբառախաղ

1. Քառյակների բաժանվեք:
2. Խմբին տրված քարտը (երկրաչափական պատկերներով և բառերով) վերլուծեք:
3. Նկարներին համապատասխան աղյուսակները լրացրեք:




4. Հաջորդ պատկերը գծիր: Ինչնի հենց դա:





5. Պատկերում քանի քառակուսի կա:
Հաշվեք: Հիմնավորեք:



6. Հաջորդ պատկերը որոշիր և տեսրումդ գծիր:



7.

Թանգրամ (պարզեցված)

1. Քառակուսին նշված գծերով կտրասիր:
2. Այդ կտորներով քո առաջարկած պատկերը կամ պատկերները կառուցիր:
3. Այդ պատկերն անվանիր:
4. Պատկերը նկարչական թղթի վրա սոսնձիր:
Պատկերի տակ դրա անունը գրիր:




8.

Նավակի պատրաստում

1. Քեզ տված պատկերը կտրասիր:
2. Ստացած կտորներով նավակ պատրաստիր:
3. Ստացված նավակը նկարչական տետրում կամ թղթի վրա սոսնձիր:



9. Կետերը տեսրերում նշեք: Կետերը միացնելով եռանկյուններ ստացեք: Քննարկեք՝ քանի եռանկյուն ստացվեց:






10.

Կուրիստական նկարներ - 2



1. Գունավոր թղթերից տարբեր երկրաչափական պատկերներ կտրիր:
2. Դրանցով քո սիրած մուլտֆիլմի սիրելի հերոսին պատկերիր:
3. Հաշվիր՝ քանի՞ պատկեր օգտագործեցիր:
4. Ստացված նկարը կարող ես նկարչական տետրի մեջ սոսնձել:



11. Հաշվեք, թե պատկերում ամեն մասնիկից քանի՞ հատ կա:




12. Պատկերներում քանի՞ եռանկյուն կա: Հաշվելու եղանակներն իրար հետ քննարկեք:






13. Շրջանների համարները նշիր: Քառանկյունները տեսրուով արտագծիր:



14. Առանց մատիտը թղթից կտրելու այս պատկերը տեսրուով գծիր: Նույն գծի վրայով երկու անգամ անցնել չի կարելի:



15.

Կուրիստական նկարներ-3


1. Քառյակների բաժանվեք:
2. Խմբի ստացած նկարն ու աղյուսակն ուսումնասիրեք:
3. Աղյուսակում նկարի անունը լրացրեք:
4. Նկարում հանդիպող երկրաչափական պատկերների քանակը հաշվեք:
5. Արդյունքները համապատասխան աղյուսակում լրացրեք:
6. Մի նկարն ավարտելուց հետո հարևան խմբի հետ ձեր նկարները փոխանակեք:
7. Ձեր և հարևան խմբի արդյունքները համեմատեք:



16.

Երկրաչափական պատկերների կառուցում

1. Ընկերոջդ հետ հաշվեձողիկներով հետևյալ պատկերը ստացեք.




2. Հերթով հետևյալ առաջադրանքները կատարեք.




- * 1 ձողիկ հանեք այնպես, որ պատկերի մեջ 3 քառակուսի մնա,
- * 2 ձողիկ հանեք այնպես, որ պատկերի մեջ 4 քառակուսի մնա,
- * 2 ձողիկ հանեք այնպես, որ պատկերի մեջ 2 քառակուսի մնա,
- * 4 ձողիկ հանեք այնպես, որ պատկերի մեջ 3 քառակուսի մնա:



17. Սեղանին 3 տարբեր աշտարակներ են դրված: Ամենակարճ աշտարակին ձեռք չտալով կարո՞ղ ես այնպես անել, որ այն մեջտեղում չլինի:





18. Այսպիսի պատկերներ ունենք:    

→ 2 → այս գործողությունը պատկերի ձևն է փոխում:

→ 4 → այս գործողությունը պատկերի գույնն է փոխում:
Ստացվող պատկերները ձեր տետրերում նկարեք:



19. Արտանկարիր: Պատկերներն ավելացրու:



20. Արտանկարիր: Նշիր, թե ինչն է փոխվել:



ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



1. Անահիտը 3 տարեկան էր, երբ Անին ծնվեց: Աղյուսակն արտագրեք և լրացրեք: Ըստ աղջիկների տարիքի պակասող թվերը բացատրեք:

| | | | | | | | | |
|----------------|---|---|---|----|----|----|----|----|
| Անահիտի տարիքը | 3 | | 8 | 11 | | 15 | | |
| Անիի տարիքը | 0 | 2 | | | 11 | | 17 | 20 |



2. Բերքահավաքի տվյալների աղյուսակն ուսումնասիրեք:

| | 1-ին Շաբաթ | 2-րդ Շաբաթ | 3-րդ Շաբաթ | 4-րդ Շաբաթ | 5-րդ Շաբաթ | 6-րդ Շաբաթ |
|----------|------------|------------|------------|------------|------------|------------|
| խնձոր | 64 կգ | 30 կգ | 60 կգ | 70 կգ | 65 կգ | 45 կգ |
| տանձ | 20 կգ | 47 կգ | 20 կգ | 25 կգ | 25 կգ | 35 կգ |
| ընդամենը | | | | | | |

Հարցերին պատասխանեք:

1. Ամենաշատ խնձորը էրբե են հավաքել:
2. Ամենաքիչ տանձը էրբե են հավաքել:
3. Ամենաշատ խնձորն ու տանձը էրբե են հավաքել:
4. Ամենաքիչ խնձորն ու տանձը էրբե են հավաքել:
5. Էրբե են նույնքան խնձոր ու տանձ հավաքել:




3. Վերևի տվյալները խորանարդիկների կամ լեզոյի բլրկների աշտարակներով (խնձոր կամ տանձ) ցույց տվեք: Ամեն խորանարդիկը հաշվեք՝

ա) 20 միավոր, **բ)** 10 միավոր, **գ)** 5 միավոր:

Ամեն դեպքում աշտարակները տետրերումդ նկարեք:

Աշտարակները կարող ենք այսպես էլ գծել:



Համաձայն ես, որ այսպես տվյալներն ավելի լավ են երևում: Եկարածս **սյունակային դիագրամ** է կոչվում: Գծածս խնձորի բերքահավաքի տվյալների պատկերումն է:




4.

Եղանակի վերլուծություն

1. Համացանցից կամ հեռուստատեսությամբ տրվող «Եղանակի տեսություն» հաղորդումներից քեզ հանձնարարված քաղաքներում առաջիկա 2 օրում սպասվող օդի ջերմաստիճանի (ցերեկը կամ գիշերը) տվյալների աղյուսակ կազմիր:
2. Խորանարդիկներով կամ լեգոյի բլոկներով այդ թվին համապատասխան աշտարակ կառուցեք:
3. Աշտարակը տեսրումդ նկարիր:
4. Տեսրումդ կամ առանձին թղթի վրա աղյուսակդ և համապատասխան դիագրամը գծիր:
5. Պաստառդ դասարանին ներկայացրու:



5. Դիագրամն ուսումնասիրեք: Աղյուսակն արտագրեք: Ըստ դիագրամի տվյալների այն լրացրեք:



| | 5-րդ դաս. | 6-րդ դաս. | 7-րդ դաս. | 8-րդ դաս. | 9-րդ դաս. |
|----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|
| աղջիկներ | | | | | |
| տղաներ | | | | | |

Ձևակերպեք՝ տվյալներն ինչի՞ մասին են:



6.

Դասարանի վերլուծություն

1. Քառյակների կամ զույգերի բաժանվեք:
2. Պարզեք՝ ձեր խմբի անդամներից ո՞վ տարվա ո՞ր եղանակին է ծնվել:
3. Որևէ մեկդ տվյալները գրատախտակի պաստառի վրա, համապատասխան անունների դիմաց ավելացրեք:
4. Ձեր խմբին հանձնարարված տարվա եղանակին ծնվածների թիվը հաշվեք:
5. Տվյալներն աղյուսակով գրանցեք:
6. Խորանարդիկներով կամ լեգոյի բլոկներով այդ թվին համապատասխան աշտարակ կառուցեք:
7. Այդ աշտարակը տետրում նկարեք:
8. Գրատախտակի դիագրամի վրա էլ համապատասխան եղանակի տեղում դիագրամը պատկերեք:



7. Քեզ արդեն ծանոթ թ. 2 առաջադրանքի աղյուսակի հիման վրա տանձի բերքահավաքի տվյալները սյունակային դիագրամով պատկերիր:



8. Այսպիսի պատկերներ ունենք:









- ② → այս գործողությունը պատկերի ձևն է փոխում:
- ④ → այս գործողությունը պատկերի գույնն է փոխում:
- ②④ → այս գործողությունը միաժամանակ պատկերի գույնն ու ձևն է փոխում:
- ② → այս գործողությունը պատկերի չափսն է փոխում:
- ③ → այս գործողությունը պատկերը նույնն է թողնում:

Ստացվող պատկերները ձեր տետրերում նկարեք:





9. Աղյուսակներն արտագրիր: Լրացրու:




10. 1 2 3 4 5 թվերի միջև գործողության նշաններ, փակագծեր դնելով արատահայտություններ կազմիր, որոնց արժեքը լինի՝ ա) 1, բ) 10:

ԵՌԱՆԻՇ ԹՎԵՐ

99 –ից մեկով մեծ թիվն ինչպե՞ս գրենք: Չէ որ թվանշանների երկու տեղում՝ տասնավորների և միավորների կարգերում ամենամեծ թվանշանն է գրված:

Ուրեմն, նոր, ավելի բարձր կարգ՝ թվանշանի տեղ պիտի բացենք:



99 –ից մեկով մեծ թվին հանդիպել ես: **Հարյուր՝ 100**: Ամեն ինչ կսկսվի նորից զրոյից:

100 101 102 ... 109,

հարյուր հարյուր հարյուր հարյուր
ու մեկ ու երկու ու ինը

Իննի հաջորդը տասն է: Ուրեմն, հաջորդը 110 – ն է և այլն:

10, 11, 12,..., 90, ..., 99

110, 111, 112,..., 190, ... , 199, հաջորդը՝ 200:

Վարժությունները քեզ կօգնեն այս ամենը լավ հասկանալ:



1. Աղյուսակն արտագրիր: Թվերը լրացրու:

| հար- յուր | հար- յուր մեկ | հար- յուր երկու | հար- յուր երեք | հար- յուր չորս | | | | | | |
|--------------|---------------------|-----------------------|----------------------|----------------------|--|--|--|--|--|--|
| 100 | 101 | 102 | 103 | | | | | | | |

Հուսով եմ նկատեցիր, որ հարյուրից մեծ թվերն առանձին են գրվում: Այսպես, հարյուր քսանվեց, հարյուր իննսունութ և այլն:

Երեք հատ հարյուր – երեք հարյուր – 300, ութ հարյուր – 800 և այլն:

Հիշում ես, որ 2 թվանշաններով գրվող թիվը երկնիշ թիվ է կոչվում: Ուրեմն, բնական է, որ 3 թվանշաններով գրվող թիվը եռանիշ թիվ է կոչվում:



2. Աղյուսակն արտագրիր: Լրացրու:

| հար- յուր | հար- յուր տաս | հար- յուր քսան | հար- յուր երե- սուն | հար- յուր քառա- սուն | հար- յուր հիսուն | հար- յուր վաթ- սուն | հար- յուր յոթա- նասուն | հար- յուր ութսուն | հար- յուր ինն- սուն | երկու հար- յուր |
|--------------|---------------------|----------------------|------------------------------|-------------------------------|------------------------|------------------------------|---------------------------------|-------------------------|------------------------------|-----------------------|
| 100 | 110 | 120 | | | | | | | | |



3. Պակասող թվերն ասա:


ա) 113, 114, 115, ... , 123,

բ) 250, 255, 260, ..., 285,

գ) 805, 804, 803, ... , 796:



4. Պակասող թվերը լրացնելով արտագրիր:



5. Հաշվիր:

ա) 13×8 ,

գ) 16×3 ,

ե) $91 : 7$,


բ) 18×6 ,

դ) $88 : 8$,

զ) $77 : 7$:





6. Որոշիր, թե ամեն բաժանումը քանի միավոր է: Արտագրիր՝ պակասող թվերը լրացնելով:





7. Դպրոցի համար 90 նստարան գնեցին: Դրանք սեղաններից 9 անգամ շատ էին: Ինչքան կահույք գնեցին:





8. Ամեն նկարում քանի խորանարդիկ կա: Հաշվիր, գրիր:





φ)



η)








9. Ըստ օրինակի պակասող թվերը լրացրու:

ա) $10 \rightarrow 11$,
 100
 200
 400
 900

բ) $8 \rightarrow 9 \rightarrow 10$,
 268
 348
 999
 638



10. Ըստ օրինակի հաշվիր:

$$3 \times 100 = 100 + 100 + 100 = 300$$

ա) 4×100 , բ) 6×100 , գ) 7×100 , դ) 9×100 :




11. Աղյուսակն արտագրիր: Լրացրու:

| | | | | | |
|-------------|-----|-----|-----|-----|-----|
| նախորդ թիվը | 700 | | | | |
| թիվը | | 629 | | 499 | |
| հաջորդ թիվը | | | 311 | | 563 |




12. Որոշիր, թե ամեն բաժանումը քանի միավոր է: Արտագրիր՝ պակասող թվերը լրացնելով:





13. Ըստ օրինակի պակասող թվերը որոշեք:



14. Այն բոլոր եռանիշ թվերը գրեք, որոնց՝

- ա) երկրորդ թվանշանը (տասնավորը) 0 է, իսկ առաջին և երրորդ թվանշանները նույնն են,
- բ) երկրորդ թվանշանը 4 է, իսկ վերջինը՝ 1,
- գ) առաջին թվանշանը 6 է, իսկ մյուս երկուսը՝ 2 կամ 1:



15. Գրեք՝

- ա) 7 – ով սկսվող ամենամեծ եռանիշ թվի նախորդ թիվը,
- բ) 2 – ով սկսվող և 8 – ով վերջացող ամենափոքր եռանիշ թիվը,
- գ) այն եռանիշ թվերը, որոնց թվանշանների գումարը 3 է: Արդյունքները համեմատեք:






16. Արտագրիր: Թվերը լրացրու:

| | | | | | | | |
|-------------|----|----|----|----|----|-----|----|
| նախորդ թիվը | 43 | | 90 | | | | 49 |
| թիվը | | 74 | | 61 | | 80 | |
| հաջորդ թիվը | 45 | | | | 95 | 100 | 57 |



17. Հաշվեք:



18.

Հասակների համեմատում

1. Ընկերոջդ հետ նշագծին մոտեցեք, իրար հասակները չափեք՝ համապատասխան նշագծի մոտ անունը նշելով:
2. Չափումների ընթացքում բոլոր արդյունքները ձեզ մոտ գրանցեք:
3. Ձեր հասակները խորանարդիկների կամ լեզոյի բլրկներից աշտարակների տեսքով ներկայացրեք:
4. Արդյունքների քննարկմանը մասնակցեք:



19. Հաշվիր:

ա) $70 + 30$,

դ) $70 + 60$,

բ) $20 + 80$,

ե) $45 \times 5 + 36 : 4$,

գ) $60 + 40$,

զ) $4 \times 100 + 5 \times 10$:



20. 2, 3, 7 թվանշաններով բոլոր հնարավոր եռանիշ թվերը կազմեք: Արդյունքներն ստուգեք:



21. 2, 0, 7, 5 թվանշաններով բոլոր հնարավոր եռանիշ թվերը կազմեք: Արդյունքներն ստուգեք:



22. Արտագրեք: Թվերը լրացրեք:

| | | | | | | | | | |
|-------------|----|----|----|----|---|----|----|----|-----|
| նախորդ թիվը | 67 | 24 | | 98 | | 31 | | | |
| թիվը | 68 | | | | | | 55 | | 100 |
| հաջորդ թիվը | | | 35 | | 2 | | | 77 | |



23. Նշված թվերը թվանշաններով գրիր:

| | |
|-----------------------|------------------------|
| երկու հարյուր հիսուն | ինը հարյուր տասնմեկ |
| երեք հարյուր քսանհինգ | վեց հարյուր երեսունյոթ |
| հարյուր իննսունութ | հարյուր ութսուներկու: |



24. Այս թվերից եռանիշները բառերով գրեք: Իրար ստուգեք:

| | | | | |
|-----|-----|-----|-----|-----|
| 312 | 178 | 15 | 46 | 107 |
| 68 | 34 | 642 | 490 | 909 |



25. Հաշվիր: Օրինակը կօգնի չսխալվել:

$$25 : 5 + 42 : 6 = 5 + 7 = 12:$$

ա) $40 : 8 + 54 : 6,$

գ) $54 : 9 + 63 : 7,$

բ) $36 : 4 + 72 : 9,$

դ) $81 : 9 + 45 : 5:$



Տանը և
դպրոցում 2

ԵՌԱՆԻՇ ԹՎԵՐԻ ԿԱՐԳԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ




1. Աղյուսակն արտագրիր: Ըստ օրինակների պակասող թվերն ու թվանշանները լրացրու:

| Թիվը | հարյուրավորների կարգ | տասնավորների կարգ | միավորների կարգ |
|------|----------------------|-------------------|-----------------|
| 154 | 1 | 5 | 4 |
| 52 | 0 | 5 | 2 |
| | 3 | 8 | 6 |
| | 2 | - | 5 |
| 600 | | | |
| 470 | | | |
| 507 | | | |
| | - | - | 4 |





2. Թվերը որոշիր: Օրինակը կօգնի:



$$2 \times 100 + 3 \times 10 + 5 \times 1 =$$


$$= 200 + 30 + 5 = 235$$






3. Համրիչների վրա ցույց տրված թվերը, դրանց կարգային վերլուծությունները տեսրերում գրեք: Օրինակը կօգնի:

| | | | | |
|-------------|--|--|-------------------|------------------|
| | | | | |
| 3 հարյուրակ | | | 2 տասն- յակ | 5 միա- վոր |



$$325 = 3 \text{ հր.} + 2 \text{ տս.} + 5 \text{ մվ.}$$






4. Ըստ օրինակի թվերի վերլուծությունները գրիր:
 $364 = 3 \text{ հր.} + 6 \text{ տս.} + 4 \text{ մվ.} = 300 + 60 + 4:$

ա) $317 = \text{հր.} + \text{տս.} + \text{մվ.},$

բ) 829, գ) 608, դ) 471, ե) 867, զ) 539:



5. Որոշեք՝ տրված թվերը համրիչի վրա ինչպե՞ն պիտի ցույց տաք:



ա) 308,

բ) 460,

գ) 901,

դ) 800:



6. Այս մեքենան թվերի հետ ի՞նչ գործողություն է կատարում: Պակասող թվերը նման ձևով «մեքենայի միջով անցկացրեք»:



$324 = 3 \text{ հր.}, 2 \text{ տս.}, 4 \text{ մվ.}:$



ա) 518,

բ) 907,

գ) 640:



7. Այն եռանիշ թվերը գրիր, որոնց առաջին թվանշանը 7 է, իսկ վերջինը՝ 3:



8. 1, 0, 9 թվանշաններով բոլոր հնարավոր եռանիշ թվերը գրեք: Քանի՞ թիվ ստացաք:



9. 24 –ից 6 անգամ մեծ թիվը որոշիր:



10. Թվերը բառերով գրիր:

ա) 483, բ) 756, գ) 962, դ) 539:



11. Մի տուփում 68 խաղալիք կա, մյուսում՝ 49: Առաջինում երկրորդից ինչքանով ավելի խաղալիք կա: Երկու տուփում քանի խաղալիք կա:



12. Պակասող թվերն անվանիր:

| | | | | | |
|-------------|-----|-----|-----|-----|-----|
| Թիվը | 378 | 469 | | 600 | |
| Հաջորդ թիվը | 379 | | 580 | | 800 |



13. Տրված թվերը թվանշաններով գրիր:

ա) ութ հարյուր երեսունինը, գ) երեք հարյուր հիսունմեկ, բ) ինը հարյուր քառասունյոթ, դ) հարյուրյոթանասուներեք:



14. Պակասող թվերն անվանիր:

| հարյուր | երկու հարյուր | երեք հարյուր | չորս հարյուր | հինգ հարյուր | վեց հարյուր | յոթ հարյուր | ութ հարյուր | ինը հարյուր |
|---------|---------------|--------------|--------------|--------------|-------------|-------------|-------------|-------------|
| 100 | 200 | | | | | | | |



15. Քննարկեք: Անհայտ գումարելին որոշեք:

ա) $60 + ? = 100$,

ե) $20 + ? = 100$,

բ) $40 + ? = 100$,

գ) $80 + ? = 100$,

գ) $70 + ? = 100$,

է) $50 + ? = 100$,

դ) $30 + ? = 100$,

ը) $10 + ? = 100$:



16. Պակասող թվերը որոշեք:

- | | |
|--|--|
| <p>1) $20 + 20 + 20 + 20 = ?$, $20 + 20 + 20 + 10 + 6 = ?$, $50 + 20 + 10 = ?$, $50 + 20 + 8 = ?$, $50 + 20 + 10 + 10 = ?$,</p> | <p>2) $50 + ? = 100$, $30 + ? = 100$, $? + 60 = 100$, $? + 20 = 100$, $? + 25 = 100$,</p> |
|--|--|
- 3) $40 + 40 + ? = 100$,
 $40 + ? + 30 = 100$,
 $50 + ? + ? = 100$,
 $? + ? + 40 = 100$,
 $25 + ? + 25 = 100$,




17. * - ի փոխարեն ինչ թվեր լինեն, որ հավասարությունները ճիշտ ստացվեն:

- | | |
|--|---|
| <p>1) $400 + * = 470$, $400 + 60 = *$, $400 + 80 = *$, $400 + * = 450$,</p> | <p>3) $420 + 20 = *$, $40 + 60 = *$, $70 + * = 100$, $50 + * = 100$,</p> |
| <p>2) $420 + 20 = *$, $410 = * + 400$, $* = 70 + 400$, $* = 400 + 30$,</p> | <p>4) $320 + * = 400$, $370 + * = 400$, $350 + * = 400$, $340 + 60 = *$:</p> |



18. Օրինակը քննարկեք: Եվս երեք ձևով 100 միավոր ստացեք:



ա) 4 հատ 5, 1 հատ 17, 9 հատ 7:
 $5 \times 4 + 17 + 7 \times 9 = 20 + 17 + 63 = 100$:

Լինում են չեն լինում երեք, քույր՝ Անին, Գայանեն և Լիլիթը: Անին Գայանեից բարձրահասակ է, Գայանեն էլ Լիլիթից է բարձրահասակ: Աղջիկներից ամենաբարձրահասակի անունն ինչ է: Իսկ աղջիկներից ամենացածրահասակի անունն ինչ է:

Արի պատկերացնենք աղջիկներին: Անին Գայանեից բարձրահասակ է, ուրեմն Անին և Գայանեին կարող ենք այսպես պատկերել՝



Անի Գայանե

Գայանեն Լիլիթից բարձրահասակ է, ուրեմն Լիլիթը Գայանեից ցածրահասակ է: Երեքին կարող ենք այսպես պատկերել՝




Անի Գայանե Լիլիթ

Եվ տեսնում ենք, որ աղջիկներից ամենաբարձրահասակը Անին է, իսկ ամենացածրահասակը՝ Լիլիթը:

Դու կարող ես ուղղակի գծելով պարզել՝



19. Մկնիկն ու ճուտիկը գնացքով գնում են: Մկնիկը վերջին և առաջին վագոնում չէ: Ճուտիկը մեջտեղի և վերջին վագոնում չէ: Օգնիր հասկանալ՝ ո՛վ ո՛ր վագոնում է:




20. Մայրիկն իր երեք աղջիկների համար 3 տարբեր գույնի գլխարկ գնեց: Անիի գլխարկը ո՛չ կանաչ էր, ո՛չ էլ դեղին: Գայանեի գլխարկը ո՛չ դեղին էր, ո՛չ էլ կարմիր: Անիի, Գայանեի և Լիլիթի գլխարկների գույնը կարո՞ղ եք որոշել:





21. Ճպուռը ծաղկի և տերևի վրա չի նստած: Մորեխը սունկի և ծաղկի վրա չէ: Զատիկը տերևի և սունկի վրա չէ: Կարո՞ղ ես ասել՝ ո՛վ ինչի՞ վրա է նստած:



22. Քաջ Նազարն ու իր կինը, հսկան ու նրա քույրը միասին երեք նարինջ կերան: Ինչպե՞ս եղավ, որ ամեն մեկը մի նարինջ կերավ:

 **23.** Երեք եղբայրներից յուրաքանչյուրը մի քույր ունի: Ընտանիքում քանի՞ զավակ կա:


 **24.** Սանդուղքը 15 աստիճան ունի: Ո՞ր աստիճանին կանգնեմ, որ սանդուղքի մեջտեղում լինեմ:


 **25.** 5 մ կտորից օրական 1 մ կտրում, օգտագործում են: Վերջին անգամ ե՞րբ կկտրեն:


Խնդիր. Ճամփորդներն առաջին օրը 80 կմ անցան, իսկ երկրորդ օրը՝ 2 անգամ ավելի: Երկրորդ օրը քանի՞ կիլոմետր անցան:

Առաջին օրը 80 կմ են անցել, իսկ երկրորդ օրը՝ 2 անգամ ավելի: Ինչ է նշանակում ինչ-որ բանից 2 անգամ ավելի: Նշանակում է երկու այդքան: Օրինակ, 1 բուռ արևածաղիկից 2 անգամ ավելի է 2 բուռը, 2 բաժակից 2 անգամ ավելի է 4 բաժակը ($2 \times 2 = 4$):

Առաջին օրն անցած 80 կմ-ից 2 անգամ ավելի ճանապարհը 2 հատ 80 կմ՝ 160 կմ է ($2 \times 80 = 160$): Երկրորդ օրն, ուրեմն, 160 կմ անցան:

 **26.** 1 կգ սալորը 60 դրամ արժե: 4 կգ սալորի համար ինչքան՞ վճարեմ:

 **27.** Մի զգեստը 20 դոլար արժե: Նման 7 զգեստի համար ինչքան՞ պետք է վճարել:

 **28.** Մեկ կիվին 60 դրամ արժե: 6 կիվիի համար որքան՞ պետք է վճարես:



29. Մի մեքենան 54 կգ էր բարձած, իսկ մյուսը՝ 2 անգամ քիչ: Երկրորդ մեքենան քանի կիլոգրամ էր բարձած:


Խնդիր. Շոկոլադի մի փոքր սալիկը 20 գրամ է: Քանի սալիկն է 100 գրամ:

Մի սալիկը 20 գ է կշռում: Մեզ 100 գ սալիկ է պետք: Քանի սալիկ պիտի վերցնենք: Մեկը 20 գ է, ուրեմն, ասենք, 2-ը 40 գ կլինի (2 x 20), 3-ը՝ 3 հատ 20 գ՝ 60 գ, ուրեմն 100 գ-ը կլինի 5 սալիկը, որովհետև 5 հատ 20 գ-ն է 100 գ լինում (100 : 20 = 5):




30. Կարդա, նկարն ուշադիր վերլուծիր ու խնդիրը հաստատն կլուծես:

ա) Բեռնատարը մինչև հանդիպումը քանի ժամ է շարժվել:




բ) Բ կետից դուրս գալուց քանի ժամ հետո է մարդատար մեքենան բեռնատարին հանդիպել:




31. ա) Մեքենաները քանի ժամից հանդիպեցին:




բ) Մինչև Գ կետը բեռնատարը քանի կմ է անցել:



32. ա) Մեքենաները քանի ժամից հանդիպեցին:



բ) Մինչև հանդիպումը բեռնատարը քանի կմ անցավ և քանի ժամում:






33.ա) Մեքենաները քանի՞ ժամից հանդիպեցին:



բ) Մինչև հանդիպումը մարդատարը քանի՞ կմ անցավ և քանի՞ ժամում:



34. Ճանապարհորդն առաջին օրը 16 կմ անցավ, իսկ երկրորդ օրը՝ 8 կմ: Երկու օրում 8 ժամ շարժվեց (նույն արագությամբ): Ժամում քանի՞ կիլոմետր էր անցնում:



35. Սկյուռը 5 հավասար ցատկերով հասավ այն ծառին, որի վրա իր փչական էր՝ 35 մ անցնելով: Սկյուռի ցատկի երկարությունն ինչքան էր:



36. Անհայտը որոշիր:


- | | | |
|-----------------------|----------------------------|---------------------------|
| 1) $400 + 70,$ | 2) $400 + ? = 480,$ | 3) $? + 30 = 230,$ |
| $500 + 60,$ | $500 + ? = 550,$ | $40 + ? = 440,$ |
| $600 + 50,$ | $600 + ? = 640,$ | $? + 200 = 230,$ |
| $400 + 10,$ | $600 + ? = 670,$ | $? + 60 = 260,$ |
| $400 + 80,$ | $300 + ? = 360,$ | $? + 90 = 690:$ |



37. Պակասող թվերն անվանիր:


- ա)** 104, 204, 304, ... , 904,
բ) 615, 625, 635, ... , 715,
գ) 700, 706, 712, ... , 760,

դ)





38. Հավաքած միավորներս հաշվիր:




39. Որոշիր՝ ամեն թվի մեջ քանի՞ տասնյակ կա: Օրինակը կօգնի:

190 = 1 հարյուրյակ և 9 տասնյակ = 10 տս. և 9 տս. = 19 տս.:


- 1) 130, 2) 280, 3) 390, 4) 620:



40. Որոշեք՝ այս մեքենաները թվերն ինչպե՛ս են «մանրում»: Ըստ օրինակի ձեր տետրերում շարունակեք: Հաշվարկը գրանցեք:



ա) 145 = 14 տասնյակ (տս.) և 5 միավոր(մվ.):
256, 832, 408, 900:



բ) $517 = 5$ հարյուրյակ (հր.) և 17 միավոր(մվ.):
672, 435, 208, 324:




41. Պակասող թվերը որոշիր (մեկում տասնյակների ես վերածում, մյուսում՝ ընդհակառակը): Տեսրունդ գրիր:

ա) $740 = 74$ տս.,
 $810 =$ տս.,
 $990 =$ տս.,
 $770 =$ տս.,

բ) 48 տս. = 480 ,
 63 տս. = ,
 75 տս. = ,
 84 տս. = :











Տրված թվերից այն թվերն արտագրիր, որոնց մեջ 80 տասնյակ կա:



42. Դահուկորդը 3 ժամ շարժվեց՝ ժամում 12 կմ անցնելով: Նույն ճանապարհը ես ինչքան ժամանակում կանցնեմ, եթե մի ժամում 6 կմ եմ անցնում:




43. Ըստ օրինակի համապատասխան հավասարությունները գրիր: Քննարկեք:





44. Պակասող թվերը որոշեք: Բացատրեք:



45. Աղյուսակներն արտագրեք: Պակասող թվերը լրացրեք:

| | | | |
|----|------------|-----|------------|
| | $\times 3$ | ? | $\times 4$ |
| 14 | 42 | 168 | |
| 18 | | | |
| 9 | | | |
| 23 | | | |
| 0 | | | |

$$14 \times 3 = \underline{3 \times 10 + 3 \times 4} = 30 + 12 = 42:$$

մտքում

$$42 \times 4 = \underline{4 \times 40 + 4 \times 2} = 160 + 8 = 168:$$

մտքում



46. Հաշվեք:

1) $43 \times 5,$

2) $42 \times 7,$

3) $51 \times 3,$

4) $55 \times 4,$

5) $37 \times 3,$

6) $52 \times 5:$

ԵՌԱՆԻՇ ԹՎԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒՄ

Եռանիշ թվերը համեմատում ենք նույն սկզբունքով, ինչ որ երկնիշ թվերը: Այսինքն, նախ համեմատում ենք առավել «ուժեղ» թվանշանները: Եռանիշ թվերի մեջ դրանք հարյուրավորներն են:

Եռանիշ թվերից մեծ է նա, որի հարյուրավորը մեծ է:

Օրինակ՝ 299 և 500 թվերից երկրորդն է մեծ, քանի որ 5 -ը 2-ից մեծ է:

Մաթեմատիկական նշաններով գրում ենք՝ $500 > 299$:

Իսկ եթե **հարյուրավորները նույնը լինեն, եռանիշ թվերից մեծ է նա, որի տասնավորը մեծ է:** Այսինքն, համեմատում ենք հաջորդ կարգի թվանշանները:

Օրինակ՝ 261 և 259 թվերից առաջինն է մեծ, քանի որ երկուսի մեջ էլ նույնքան հարյուրյակ կա, իսկ 6 տս. -ը 5 տասնյակից շատ է:

Մաթեմատիկական նշաններով գրում ենք՝ $261 > 259$:

Բայց եթե $\bar{\bar{}}$ հարյուրավորների, $\bar{\bar{}}$ տասնավորների կարգերում թվանշանները նույնն են, ապա համեմատում ենք միավորները:

Օրինակ՝ 271 և 279 թվերից երկրորդն է մեծ, քանի որ երկուսի մեջ էլ նույնքան հարյուրյակ ու տասնյակ կա, իսկ 9 մվ. -ը 1 միավորից շատ է: Ուրեմն, $279 > 271$:



1. Թվերը համեմատիր: Եզրակացությունդ գրանցիր:

ա) 300 և 600,

գ) 530 և 390,

բ) 470 և 480

դ) 370 և 371:



2. Տրված թվերը մեծից փոքր դասավորիր (նվազման կարգով):

498, 496, 503, 599, 601:



3. Տրված թվերը փոքրից մեծ դասավորիր (աճման կարգով):

700, 599, 587, 689, 683:



4. Արտագրեք՝ թվերն անվանելով ու գրելով:

| | | | | | | | | | |
|-----|----|-----|--|--|--|--|--|--|-----|
| 10 | 20 | | | | | | | | 100 |
| 110 | | 130 | | | | | | | 200 |
| 210 | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | 500 |



5. Գումարելիների մեջ գտեք այն երկուսը, որոնց գումարը 100 է: Օրինակի նման հաշվեք:

$$20 + 80 + 17 = 100 + 17 = 117$$

1) $60 + 15 + 40,$

3) $50 + 12 + 50,$

2) $20 + 70 + 30,$

4) $10 + 14 + 90:$



6. Թվերը գրիր:



ա) ինը հարյուր երեսունինը,

բ) երկու հարյուր ութսունութ,



գ) ութ հարյուր քառասունինը,

դ) ինը հարյուր վաթսունչորս:

ունեինք




դարձավ



Եթե ստացված 3 հարյուրակից հանեք սկզբում եղած 2 հարյուրակը, կմնա այն, ինչ ավելացվել է:

$$3 \text{ հր.} - 2 \text{ հր.} = 1 \text{ հր.:}$$



7. Անհայտ գումարելին գտեք: Ինչպե՞ս գտաք: Վերևի օրինակը ձեզ կօգնի:

40

$$70 + * = 110, \quad 110 - 70 = 40$$

Նկատեցի՞ք որ $7 + 4 = 11$, և $\underline{70} + \underline{40} = \underline{110}$ (7 տս. գումարած 4 տս. 11 տս. է հավասար):

Կամ՝ $7 - 4 = 3$, $\underline{70} - \underline{40} = \underline{30}$:

1) $70 + * = 150,$

$90 + * = 140,$

$80 + * = 160,$

$60 + * = 150,$

$70 + * = 130,$

2) $* + 90 = 170,$

$* + 200 = 300,$

$* + 80 = 130,$

$* + 120 = 200,$

$* + 300 = 500:$



8. Գրիր՝

ա) 4-ով սկսվող ամենամեծ եռանիշ թիվը,

բ) ամենափոքր եռանիշ թվից 68-ով մեծ թիվը,

գ) 6-ով սկսվող ամենամեծ եռանիշ թվի հաջորդ թիվը,

դ) այն եռանիշ թվերը, որոնց առաջին թվանշանը 7 է, իսկ վերջինը՝ 8,

ե) այն եռանիշ թվերը, որոնց երկրորդ թվանշանը 4 է, իսկ վերջինը՝ 1:



9. Ձիավորը 28 կիլոմետրը քանի՞ ժամում անցավ, եթե ժամում 14 կիլոմետր էր անցնում:



10. Դահուկորդը ժամում 18 կմ էր անցնում: 3 ժամում քանի՞ կմ կանցնի:



11. Մի քաղաքից մյուսը հեծանվորդը 4 ժամում գնաց՝ ժամում 14 կմ անցնելով: Նույն ճանապարհը հետիոտն ինչքան ժամանակում կանցնի, եթե ժամում 7 կմ է անցնում:



12. Ձմռան համար գնած 4 - մետրանոց գերանը կեսմետրանոց կտորների էինք վերածում: Ամեն սղոցելը 4 թուպե էր տևում: Գերանը քանի՞ թուպեում սղոցեցինք:



13. 3 միանման գերանը ձմռան համար հավասար կտորների բաժանեցինք: Քանի՞ կտորի բաժանեցինք, եթե 15 անգամ սղոցեցինք:



Տանը և
դպրոցում 2

ՏԱՐԵՎԵՐՁՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ՆՅՈՒԹԵՐ

1. Հայրը 32 ձուկ բռնեց, իսկ որդին՝ 4 անգամ քիչ: Երկուսով քանի՞ ձուկ բռնեցին:
2. Մի կարասում 42 լ ջուր կա, իսկ մյուսում՝ 6 անգամ քիչ: Երկու կարասում միասին քանի՞ լիտր ջուր կա:
3. Առաջին օրը 9 կգ լոլիկ հավաքեցին, իսկ երկրորդ օրը՝ 3 անգամ ավելի: Ընդամենը քանի՞ կիլոգրամ լոլիկ հավաքեցին:

4. Գործողությունները կատարիր:

- | | | | |
|---------------|--------------------|--------------------|--------------------|
| 1) $40 + 57,$ | 6) $69 - 47,$ | 11) $14 \times 8,$ | 16) $14 \times 9,$ |
| 2) $46 + 25,$ | 7) $23 \times 4,$ | 12) $18 : 6,$ | 17) $50 : 10,$ |
| 3) $39 + 38,$ | 8) $21 \times 4,$ | 13) $36 : 4,$ | 18) $30 : 3,$ |
| 4) $55 + 37,$ | 9) $28 \times 2,$ | 14) $42 : 7,$ | 19) $70 : 7,$ |
| 5) $85 - 72,$ | 10) $34 \times 7,$ | 15) $19 \times 9,$ | 20) $36 : 4,$ |

21) $23 \times 7 + 63 : 9,$

22) $35 \times 6 - 49 : 7,$

23) $48 \times 4 + 7 \times 8,$

24) $19 \times 8 + 64 : 8,$

25) $63 : 9 + 48 : 6,$

26) $35 : 5 + 81 : 9,$

27) $72 : 8 - 35 : 7,$

28) $56 : 7 - 21 : 7,$

29) $7 \times 8 + 4 \times 6,$

30) $8 \times 3 + 9 \times 8,$

31) $6 \times 8 - 5 \times 9,$

32) $6 \times 9 - 7 \times 7,$

33) $2 \times 8 + 42 : 6,$

34) $4 \times 8 + 64 : 8,$


35) $48 : 6 + 9 \times 3,$

36) $81 : 9 + 8 \times 7,$

37) $8 \times 8 - 36 : 4,$


38) $5 \times 9 - 0 : 3:$

5. Որևէ երկնիչ թվով մեկնարկիր: Հաշվելով վերջնական հասիր:



6. Այգու խնձորի բերքը 3 արկղի մեջ հավասար լցրինք (ամեն արկղում՝ 14 կգ): Մնացածը 5 տոպրակի մեջ լցրինք (յուրաքանչյուրում՝ 4 կգ): Ընդամենը ինչքան խնձոր էինք հավաքել:
7. Վինի-Թուխը նոր մեղրը նախ 15 բանկայի մեջ տեղավորեց (ամեն մեկում՝ 4 կգ): Մնացածը 2 բանկայով (ամեն մեկում՝ 3 կգ) Դնչիկին տվեց: Վինի-Թուխը քանի՞ կիլոգրամ նոր մեղր էր ստացել:
8. Եղբայրս 20 տարեկան է: Քույրս նրանից 15 տարով փոքր է: Քույրս եղբորիցս քանի՞ անգամ է փոքր:
9. Մեր դասարանը այգում 14 ծառ է տնկել: Դա ընկերոջս դասարանի տնկածից 2 անգամ քիչ է: Ո՞ր դասարանն է ավելի շատ ծառ տնկել և որքանով:
10. Այն զույգ թվերը գրիր, որոնք 51 – ից մեծ են, 80 - ից՝ փոքր: Արդյունքները համեմատեք:


11. Թելի ծայրից սկսելով և մատիտը թղթից չկտրելով՝ պատկերը գծիր: Նույն գծի վրայով երկու անգամ անցնել չի կարելի:



12. 4, 7, 1 թվանշաններով բոլոր հնարավոր երկնիշ և եռանիշ թվերը կազմիր: Թվի մեջ թվանշանները չեն կարող կրկնվել:

13. Արտագծիր: Թվազույգերին համապատասխանող կետերը ցանցի վրա նշիր: Դրանք տրված հերթականությամբ միացրու: Ինչ ստացվեց:

(4; 7), (5; 8), (6; 8), (8; 9), (9; 9), (7; 8), (9; 8), (6; 7), (7; 6), (9; 6), (11; 5), (12; 3), (12; 2), (13; 3), (12; 1), (7; 1), (8; 2), (9; 2), (8; 3), (6; 1), (5; 1), (6; 2), (6; 3), (5; 6), (4; 6), (4; 7), (5; 7):



14. Արամը, Բագրատն ու Գագիկը եռահարկ շենքի տարբեր հարկերում են ապրում: Արամն ամենավերևի և ամենաներքևի հարկում չի ապրում: Բագրատն ամենաներքևի և մեջտեղի հարկում չի ապրում: Կարո՞ղ ես օգնել հասկանալ՝ ո՞ր տղան ո՞ր հարկում է ապրում:

15. Երկու ընկերներ պայմանավորվեցին գնացքի նույն վագոնում հարևան քաղաք գնալ: Գնացքն ինը վագոն ուներ: Ընկերներից մեկը սկզբից 5-րդ վագոնը նստեց, իսկ մյուսը՝ վերջից 5-րդը: Ինչ ես կարծում, ընկերները նոյն վագոնը նստեցին:
16. Արքայազնն ու իր երեք ընկերները Մոխրոտի կոշիկը հերթով 64 տարբեր աղջիկների փորձել տվեցին: Ամեն մեկը կոշիկը քանի՞ աղջկա ոտքին փորձեց, եթե գործն իրար մեջ հավասար էին բաժանել:
17. 68 տուփ մատիտը 17 մարդու հավասար կարող ենք բաժանել: Ինչպե՞ս:
18. 54 գնդակը քանի՞ ամանորյա նվերի մեջ կարելի է դնել (բոլոր նվերների մեջ նույնքան գնդակ պիտի դնենք):
19. Մի թխսկանը 6 ճուտ ունի: Դա մյուս թխսկանի ունեցածից 5 անգամ քիչ է: Երկրորդ թխսկանը քանի՞ ճուտ ունի:
20. Ձմռան համար 50 կգ կարտոֆիլ և 10 կգ սոխ պատվիրեցինք: Քանի՞ անգամ շատ կարտոֆիլ պատվիրեցինք:
21. 3 դույլերի մեջ 24 լ կաթ է: Նման 9 դույլի մեջ որքան կաթ կլինի:
22. 2 միանման տուփում 36 գունավոր մատիտ է տեղավորվում: 72 մատիտի համար քանի՞ այդպիսի տուփ է անհրաժեշտ:
23. Շինարարներն ավազանից չորս 30 լ-անոց տակառով ջուր վերցրին, որից հետո ավազանում 15 լ ջուր մնաց: Ավազանում սկզբում քանի՞ լիտր ջուր կար:
24. Թվերը հայերենով գրիր:
ա) 145, **բ)** 319, **գ)** 834, **դ)** 956:

25. Դրոշմանիշներին հավաքածուն 3 արբոմի մեջ դասավորելուց հետո 24-ը դուրս մնացին (չկարողացա տեղավորել): Հավաքածուիս մեջ քանի՞ դրոշմանիշ կար, եթե ամեն արբոմում 70 դրոշմանիշ էր տեղավորվել:

26. Գրիր՝

ա) 3 – ով սկսվող ամենափոքր եռանիշ թիվը,

բ) 1 – ով վերջացող ամենափոքր եռանիշ թիվը,

գ) ամենամեծ երկնիշ թվից 3 տասնյակով մեծ թիվը,

դ) 3 եռանիշ թիվ, որոնց բոլոր թվանշանները նույնն են,

ե) բոլոր եռանիշ թվերը, որոնց առաջին թվանշանը 3 է, իսկ երկրորդը՝ 8:

27. 17 մ ռեզինե խողովակից 4 միանման կտոր կտրեցին ու էլի 5 մ մնաց: Ամեն կտորը քանի՞ մետր էր:

28. 4 տուփ մատիտ ունեմ (ամեն տուփում 20 մատիտ) և 4 տուփ նշագրիչ (ամեն տուփում 10 նշագրիչ): Մատիտներս նշագրիչներիցս քանի՞ անգամ են շատ: Իսկ քանիսով են շատ:

29. Բազիլիո կատուն, միամիտների խաբելով, 18 ոսկի էր գողացել: Դա Ալիսա աղվեսի գողացածից 3 անգամ շատ էր: Ո՞վ էր ավելի շատ գողացել և ինչքանով:

30. Ճնճողուկներն ու աղավնիները Մոխրոտին օգնում էին ոսպը ցորենից առանձնացնելու: Աղավնիները 24 կգ մաքրեցին, ճնճողուկների մաքրածից 3 անգամ շատ: Որո՞նք ավելի շատ մաքրեցին և ինչքանով:

- 31.** Գանձանակիս 10 - դրամանոցները 4 տուփի մեջ տեղավորվեցին (ամեն մեկում՝ 10 հատ), իսկ 20-դրամանոցները՝ 1 տուփի մեջ (20 հատ): Կարո՞ղ ես հաշվել՝ գանձանակիս մեջ ինչքան փող էր հավաքվել:
- 32.** Վինի-Թուխը նոր մեղրը 15 բանկայի մեջ տեղավորեց (ամեն մեկում՝ 4 կգ), իսկ մնացածը՝ 2 բանկայով (ամեն մեկում՝ 3 կգ) Դնչիկին տվեց: Վինի-Թուխը քանի՞ կիլոգրամ նոր մեղր էր ստացել:
- 33.** Ձմռան համար մթերված կարտոֆիլը 10 արկղի մեջ հավասար (ամեն արկղում՝ 15 կգ) լցրինք, իսկ մնացածը՝ 2 պարկի մեջ (ամեն պարկում՝ 12 կգ): Ընդամենը քանի՞ կիլոգրամ կարտոֆիլ էինք մթերել:
- 34.** 3 ավտոբուսով և 6 մարդատար մեքենայով զբոսաշրջիկներ Մատենադարան եկան: Ամեն ավտոբուսի մեջ 25 մարդ էր նստել, իսկ ամեն մեքենայի մեջ՝ 5 մարդ: Քանի՞ մարդ էր Մատենադարան էքսկուրսիա եկել:
- 35.** Գունավոր մատիտների 4 մեծ տուփ ունեմ (ամեն մեկում՝ 20 մատիտ) և մի քանի փոքր տուփ (ամեն մեկում՝ 5): Կարո՞ղ ես ասել՝ մատիտների քանի՞ փոքր տուփ ունեմ, եթե ընդամենը 100 մատիտ ունեմ:
- 36.** 48 նշագրիչներս 3 տուփի մեջ դասավորեցի, ամեն մեկում՝ 12-ը: Մնացածն էլ փոքր եղբորս տվեցի: Եղբորս քանի՞ նշագրիչ տվեցի:













37. 4 տակառիկով (ամեն մեկում՝ 12 լ) և 4 բանկայով մանկապարտեզի համար կաթ բերեցին: Ամեն բանկան քանի լիտր էր տեղավորել, եթե ընդամենը 56 լ կաթ բերեցին:
38. Մի քանի տոպրակով 95 տանձ գնեցինք: 4 մեծ տոպրակներից ամեն մեկում 20 տանձ էր, իսկ փոքր տոպրակներից ամեն մեկում՝ 5 տանձ: Քանի փոքր տոպրակ կար:
39. Երկու միանման տակառիկով մանկապարտեզ կաթ բերեցին: Ամեն տակառիկի մեջ ինչքան կաթ կար, եթե 44 լ ծախսելուց հետո 2 լիտր կաթ մնաց:
40. Խանութ երկու միանման տակառով գարեջուր բերեցին: Ամեն տակառի մեջ ինչքան գարեջուր կար, եթե 84 լ վաճառելուց հետո 10 լ մնաց:
41. Երկու դասարաններում 25-ական աշակերտ էր սովորում, երրորդում՝ 30: Մրցումների ժամանակ նրանք 4 թիմ կազմեցին: Ամեն թիմում քանի աշակերտ էր:
42. Զբոսաշրջիկները 2 օրում (նույն արագությամբ շարժվելով) 84 կմ անցան: Առաջին օրը 7 ժամ քայլեցին, երկրորդ օրը՝ 5 ժամ: Յուրաքանչյուր օր քանի կիլոմետր անցան:
43. Քաղաքից գյուղ տանող ճանապարհը 80 կմ է: Հետիոտները քանի օրում քաղաքից գյուղ կհասնի, եթե օրական 40 կմ անցնի:
44. Տաքսիների կանգառում 10 մեքենա շարված ուղևորների էին սպասում: Առաջին երկուսը, ուղևոր վերցնելով, հեռացան: Քանի մեքենա տեղում մնաց:
45. Փակագծեր ավելացրեք: Ստացված բոլոր հնարավոր արտահայտությունների արժեքները հաշվեք: Դրանցից ամենամեծ և ամենափոքր արժեքները որոշեք

ա) $60 + 40 : 4 + 2$, բ) $100 - 20 \times 3 + 2$:

46. 4 հատ «4» թվանշանները մեկական անգամ օգտագործելով, թվաբանական գործողություններով միացնելով՝ ստացիր

ա) 0, բ) 8:

47. Պակասող թվերը որոշեք: Արդյունքները քննարկեք:



Տանը և
դպրոցում 2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|----|
| Բաժանում | 4 |
| Բաժանման բաղադրիչներ | 9 |
| Տասնյակների բաժանում միանիշ թվի | 20 |
| Երկնիշ թվի բաժանում միանիշ թվի..... | 26 |
| Թվային արտահայտության արժեքի հաշվում | 31 |
| Բաժանման հատկություններ..... | 37 |
| Երկնիշ թվերի բաժանում | 40 |
| Մեծություններ, դրանց չափում | 44 |
| Երկրաչափություն | 49 |
| Տվյալների հավաքում, վերլուծություն..... | 55 |
| Եռանիշ թվեր | 60 |
| Եռանիշ թվերի կարգային վերլուծություն | 69 |
| Եռանիշ թվերի համեմատում | 83 |
| Տարեվերջյան ամփոփիչ նյութեր | 87 |



ԷԴԻՑ ԴՐԻՆՏ
Երևան, Գ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am